

3-4(505-506)
10.02.2018
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինասպորտին և գիրքար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՄԵՐ ԱՆԿԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՒՐ ՓԵՏՐՎԱՐ

Ինչպիսի՞ն կլինեն այսօր Արցախի ճակատագիրը, եթե երեսուն տարի առաջ չբարձրացվեր ԼՂԻՄ-ը Ադրբեջանի ենթակայությունից հանելու հարցը:

Կա կարծիք, որ հենց Ղարաբաղը պատճառ դարձավ ԽՍՀՄ փլուզման, որովհետև ինքնորոշման իրավունքի իրացման պահանջն Արցախից սկսվեց՝ տրամաբանորեն փոխանցվելով մյուս միութենական սուբյեկտներին և հատկապես՝ ազգային հանրապետություններին: Այս տեսակետն, անշուշտ, կարելի է ոչ միայն ընդունել, և թերևս դա այնքան էլ եական չէ: Փաստն այն է, որ շուրջ յոթանասուն տարի ադրբեջանական գերության մեջ գտնվող Ղարաբաղն իր մեջ ուժ գտավ հակադրվելու խորհրդային կարծրատիպերին, բարձրաձայնելու «ինտերնացիոնալ» կայսրությունում առկա անարդարությունների մասին, մատնանշելու ազգային խտրականության ծանր երևույթը և, վերջապես, հաստատելու ազատ կամարտահայտության իրավունքը՝ թեկուզև խորհրդային Միության պես բռնապետական երկրում:

Միևնույն ժամանակ, համայնավարական հասարակարգն արդեն սպառել էր իրեն ու այլևս չէր կարող դիմագրավել ծառայած մարտահրավերներին: ԽՍՀՄ-ը քայքայվում էր կայուն օրինակապետության, և այն անպայման ճեղք էր տալու, եթե ոչ Ստեփանակերտից, ապա հսկայածավալ երկրի մեկ այլ վարչաքաղաքական տարածքից:

Արժանին պիտի մատուցել Շարժման առաջամարտիկներին, ովքեր կամխատեսեցին Վերակառուցման հնարավոր հետևանքները և կարողացան իրենց հետևից տանել ժողովրդական զանգվածներին: Անգամ եթե կայսրության փլուզումն ամխուսակալի էր, միևնույն է, տրոհումն ընթացավ ծանր ցնցումներով: Այն, ինչ տեղի է ունեցել 1988-1991 թվականներին, այսօր մինչև ԼՂՀ հռչակումը, այլ կերպ չեն որակի, քան Ադրբեջանի և կենտրոնական իշխանությունների կողմից իրականացված պետական սիստեմային: Հայերի բռնի տեղահանումներն ու զանգվածային ջարդերը, ապօրինի ձերբակալություններն ու պետական կառույցների կազմալուծումն, այս բոլոր դաժանությունները նպատակաուղղված էին ազատասիրական գաղափարն օրորոցում խեղդելուն: Բայց ընթացող Արցախը, ունենալով համայն հայության գործուն աջակցությունը, կարողացավ դիմագրավել այդ փորձություններին: Արցախը վերածվեց առաջնակետի ոչ միայն աշխարհագրական իմաստով, այն դարձավ միասնականության գաղափար, որի շուրջ համախմբված՝ հայ ժողովուրդը վստահաբար ընթանում է դեպի իդեալի Արարատը:

Ինքնին պարզ է, որ եթե Արցախը չընդգծեր ու ԽՍՀՄ-ի քայքայումից հետո մնար անկախություն ստացած Ադրբեջանի կազմում, հաստատապես կարծանանար Նախիջևանի դառը ճակատագրին: Մեկընդմիջտ կմարեր ազատության հուրը հայի կրծքում, և դեռ ավելին՝ նոր սպառնալիքներ կառաջանային Հայաստանի սահմաններում, քանզի ազերիներն նույն թուրքն է, իսկ թուրքը երբեք չի փոխում գազանային բնույթը: Նա կացնը միշտ փեշի տակ թաքցրած է պահում՝ պատրաստ գլխատելու խաղաղ քնով քնածներին:

Փետրվարյան ազատագրական շարժումը մեր անկախության բարուն էր, որ Սասունցի Դավթի պես օրավուր մեծացավ ու թուր Կեծակիով փշրեց իր ազատությունն արգելափակող ծանր ջրաղացքերը:

Թող, ուրեմն, դավթյան անպարտելի ոգին մեզ միշտ զորավիգ լինի:

«ԼՍՐԱՐԱՐ»

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ



Աշխարհի «Ուլտիմաթս» պրոֆեսիոնալ մենամարտերի ֆեդերացիայի նախածեմությանը հունվարի 27-28-ը Կրասսանի Ռուսթավի քաղաքում կայացավ խաղը մենամարտերի (MMA) աշխարհի առաջնություն, որին մասնակցեց նաև Արցախի պրոֆեսիոնալ արմֆայթինգի ֆեդերացիան ներկայացնող՝ մեր համերկրացի մարզիկ Արմեն Հայրապետյանը և դարձավ աշխարհի չեմպիոն: Հիտունվեց կգ քաշային կարգում պայքարող քսաներեքամյա մարզիկ և ֆեդերացիայի գլխավոր մարզիչ Արմեն Հայրապետյանը հայրենիք վերադարձավ ոսկե մեդալով, գոտիով, պատվոգրով և, ինչպես ինքն է նշում, վաղեմի երազանքն իրականացրած:

Աշխարհի չեմպիոնի հետ հարցազրույցը կարդացեք 5-րդ էջում

ԱՐՅԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԹՈՆՔԻ ԱՄԻՍ

Փետրվարը առանձնահատուկ ամիս է հայ ժողովրդի համար: Այն արցախահայության զարթոնքի ամիսն է: 1988 թվականը Լեռնային Ղարաբաղի պատմության մեջ եղավ շրջադարձային: Ոգևորված գորբաչովյան հրապարակայնության, ժողովրդավարության կարգախոսներով՝ նա բարձրացրեց դեռևս 20-ական, 60-ական թվականներից ծխացող ղարաբաղյան հիմնահանդերը: Արցախ աշխարհը փոթորկվեց: Պատմության դասերից գիտենք՝ երբ ժողովուրդն է փոթորկվում, ուրեմն՝ հերոսներ ծնվելու ժամանակն է:

1988թ. փետրվարի 13-ից ի վեր Ստեփանակերտի Լեռնի հրապարակում ամեն օր հանրահավաքներ էին լինում 40-50 հազար մարդու մասնակցությամբ: Փետրվարի 17-ին Սոսկվայից Ստեփանակերտ վերադարձավ արցախցի մտավորականների պատվիրակությունը: Այս չոր տեքստը չի կարող փոխանցել այն, ինչ տեղի էր ունենում Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում 1988թ. փետրվարի 20-ին: ԽՍՀՄ Կենտկոմը մեր ազատագրական շարժումը որակեց ծայրահեղական:

ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նստաշրջանն ընդունեց պատմական որոշում՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ տեղափոխելու մասին:

Սակայն արցախահայության արդար պահանջը քաղաքակիրթ հուն տեղափոխելուն ուղղված յուրաքանչյուր գործողության հետևեցին զանգվածային բռնություններ, հայ ազգաբնակչության իրավունքների ոտնահարում, տնտեսական շրջափակում: ԼՂԻՄ-ից հարյուրավոր կիլոմետրեր հեռու արդեջանական քաղաքներում՝ Սուճայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Շամախիում և այլուր կազմակերպվեցին հայերի զանգվածային ջարդեր: Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի քաղաքներից ու գյուղերից շուրջ 500 հազար հայ դարձավ փախստական:

1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, նույն

թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որը հաստատեց Ղարաբաղի անկախությունը:

1992թ. հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի բարձրագույն օրենսդիր մարմնի առաջին նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը: 1992թ. հունիսի 2-ին ընդունվեց Ղարաբաղի պետական դրոշը, իսկ նոյեմբերի 17-ին՝ երկրի զինանշանն ու օրհներգը:

Անկախ ԼՂՀ կառավարությունը իր պարտականությունների իրականացման անցավ բացարձակ շրջափակման և դրան հետևած Ադրբեջանի ռազմական ագրեսիայի պայմաններում: Հայ ժողովրդի վզին փաթաթվեց անհավասար մի մարտ: Օտարների համար պարզապես հողատարածք հանդիսացող մեր երկրամասում բախվեցին ոչ միայն բանակներ, այլ նաև հզոր աշխարհաքաղաքական շահեր: Այդ պատերազմն, ինչպես հայտնի է, փոփոխական հաջողություններով 1991թ. աշնանից շարունակվեց մինչև 1994թ. մայիս: Մարտերի բովուժ սկսեց կազմավորվել ԼՂՀ բանակը: Ու սկսեց գրվել մարտական փայլուն կենսագրություն, որի առաջին էջը դարձավ Ստեփանակերտը շրջապատող կրակակետերի վերացման ռազմական գործողությունների հաջող իրականացումը: 1992թ. իրար հետևից ազատագրվեցին Կրկմանը, Քարին տակը, Խոջալուսն, Շուշին: Շուշիի ազատագրումը և Լաչինի միջանցքով Հայաստանի հետ ցամաքային կապի վերականգնումը Արցախյան պատերազմի ծանրակշիռ նվաճումներից էին, որոնք իրական դարձրին մեր անկախությունը: Շուշին մեր հաղթանակների թագն է և այն հիմնաքարը, որի հաղթական պտույտներն անցան Քելբաջարով, Աղդամով, Ֆիզուլիով, Կուբաթլուով, Ջանգելանով: Ամբողջ աշխարհին ապացուցեցինք, որ հայն իրավունք ունի գոյատևելու և հարատևելու:

Պատերազմի ընթացքում Արցախի ազատագրված տարածքը կազմում է 12 հազար քառ.կմ, որն ամրագրված է ԼՂՀ Սահմանադրությամբ: Ցավոք, հայկական կողմն ունեցավ նաև տարածքային կորուստներ: Մինչ օրս Ադրբեջանական օկուպացիայի տակ են ԼՂՀ Շահումյանի շրջանը՝ 600 քառ. կմ, Մարտակերտի ու Մարտունու շրջանների որոշ տարածքներ, Դաշտային Արցախի մի մասը և Արծվաշենը: Ադրբեջանական իշխանությունները հետագա խայտառակությունից խուսափելու համար հարկադրված էին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ և Միսկիխի խմբի օգնությամբ 1994թ. մայիսին զինադադար խնդրել: Դադարեցվեցին ռազմական գործողությունները, և սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը, որը 2018թ. դրությամբ դեռ շարունակվում է:

Մենք ուսուցիչներս, մեծ ուխտեր ենք կապում մեր այսօրվա սերնդի հետ, որը մեր վաղվա հերոս պաշտպանը կդառնա: Մենք վստահ պետք է լինենք, որ արյունով ձեռք բերածը գրչով չեն հանձնի, իսկ դրա համար մեր նոր սերունդը պետք է լինի քաջ, ազգասեր, որ կարողանա ժառանգած անկախությունը, խաղաղությունը, արյունով շաղախված մեր տարածքները կտակել գալիք սերունդներին: Դա մեր փառապանն ու լուսավոր ուղին է, որը պետք է անցնենք Նժդեհյան նշանաբանով:

«Փառքի կատարները բարձրանալու համար կա մի հատիկ սանդուղք, որի առաջին աստիճանը կոչվում է քաջություն, իսկ վերջինը՝ դարձյալ քաջություն՝ մահամերձի քաջություն»:

Հայ ժողովուրդը խորին երախտագիտությամբ և ակնածանքով է հիշում Արցախյան ազատամարտի հերոս մասնակիցներին, որոնք փառապանն ու լուսավոր ուղի հարթեցին և դարձան հավերժ ճամփորդներ...

Հավերժ փառք ու պատիվ նրանց:

Ցավոք, հայկական կողմն ունեցավ նաև տարածքային կորուստներ: Մինչ օրս Ադրբեջանական օկուպացիայի տակ են ԼՂՀ Շահումյանի շրջանը՝ 600 քառ. կմ, Մարտակերտի ու Մարտունու շրջանների որոշ տարածքներ, Դաշտային Արցախի մի մասը և Արծվաշենը: Ադրբեջանական իշխանությունները հետագա խայտառակությունից խուսափելու համար հարկադրված էին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ և Միսկիխի խմբի օգնությամբ 1994թ. մայիսին զինադադար խնդրել: Դադարեցվեցին ռազմական գործողությունները, և սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը, որը 2018թ. դրությամբ դեռ շարունակվում է:

Մենք ուսուցիչներս, մեծ ուխտեր ենք կապում մեր այսօրվա սերնդի հետ, որը մեր վաղվա հերոս պաշտպանը կդառնա: Մենք վստահ պետք է լինենք, որ արյունով ձեռք բերածը գրչով չեն հանձնի, իսկ դրա համար մեր նոր սերունդը պետք է լինի քաջ, ազգասեր, որ կարողանա ժառանգած անկախությունը, խաղաղությունը, արյունով շաղախված մեր տարածքները կտակել գալիք սերունդներին: Դա մեր փառապանն ու լուսավոր ուղին է, որը պետք է անցնենք Նժդեհյան նշանաբանով:

«Փառքի կատարները բարձրանալու համար կա մի հատիկ սանդուղք, որի առաջին աստիճանը կոչվում է քաջություն, իսկ վերջինը՝ դարձյալ քաջություն՝ մահամերձի քաջություն»:

Հայ ժողովուրդը խորին երախտագիտությամբ և ակնածանքով է հիշում Արցախյան ազատամարտի հերոս մասնակիցներին, որոնք փառապանն ու լուսավոր ուղի հարթեցին և դարձան հավերժ ճամփորդներ...

Հավերժ փառք ու պատիվ նրանց:

Լարիսա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ա. Սախարովի անվան թիվ 8 միջն. հոսքային դպրոցի պարունության մեթոդավարման նախագահ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ԷԶԵՐ



Արցախյան շարժման առաջամարտիկ Համլետ Գրիգորյանի հեղինակությամբ օրերս լույս տեսավ «Անթեղված կրակ» գիրքը՝ նվիրված Ղարաբաղյան շարժման 30-ամյակին: Այն հուշագրությունների, վավերագրությունների ամփոփ ժողովածու է: Գիրքը «Ան-

թեղված կրակ» վերնագրելով՝ հեղինակը նպատակ է ունեցել ցույց տալ, որ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի կրակը երբեք չի մարել. այն որոշ ժամանակ՝ խորհրդային պետության տարիներին, երբ Ղարաբաղը բռնակցվել է Ադրբեջանին, խոր անթեղվեց, բայց երբեմն-երբեմն բորբոքվում էր՝ մինչև բռնկվեց Արցախյան շարժումը, որը տակնուվրա արեց ոչ միայն Արցախը, ոչ միայն աշխարհի 10-միլիոնանոց հայությանը, այլև 70 տարի գործող բռնապետությունը:

Հ. Գրիգորյանը, լինելով Շարժման ակունքներում կանգնած մտավորական, իր առջև խնդիր չի դրել ներկայացնել ամբողջ տարեգրությունը, այլ որոշ կարևոր դրվագներ, որոնք լույս կսփռեն դրա վրա, աղբյուր կծառայեն հետագա պատմագրության համար: Շարժման տարիներին Հ. Գրիգորյանը Ստեփանակերտի ման-

կավարժական ինստիտուտի դասախոս էր (հետագայում՝ կրթության և գիտության նախարար, ԱրԴՀ ռեկտոր), եղել է իրադարձությունների կիզակետում և երեսուն տարիների հեռվից ակամատեսի իր դիտարկումներն է ներկայացրել:

Հեղինակը պրպտուն աշխատանք է կատարել Շարժման ակտիվիստների անուններն ստույգ ներկայացնելու և որտեղ որ կասկածում է, ներողամտություն է հայցում: Նա թվարկում է անուններ, ինչպես օրինակ՝ «Կռունկ» կազմակերպության խորհրդի, հանձնաժողովների անդամների, որոնք ամբողջությամբ առաջին անգամ են հրապարակվում:

Հ. Գրիգորյանը ձգտել է հավատարիմ մնալ անաչառ տարեգրողի իր առաքելությանը: Գրքում փոշ են գտել ոչ միայն տվյալներ, փաստեր, այլև ծիծաղաշարժ դեպքեր այդ տարիներից, ու նաև

իր և ընկերների՝ ադրբեջանական և ռուսական բանտերում հայտնվելու գողգոթան:

Գիրքն ավարտվում է երեսուն տարի անց մեր ձեռքբերումների և, ինչպես ինքն է ասում, ցանկությունների, այսինքն՝ նպատակների, որ ի սկզբանե դրվել էին, բայց որոնց դեռ չեն հասել, արտահայտմամբ՝ դրանով իսկ ակնարկելով ինչ-ինչ աշխատանքներում թերացումներն և վերջնանպատակին հասնելու ուղղությամբ մեր առաջնահերթ անելիքները:


Գրքում կարմիր թելի պես անցնում է հայրենասեր, ազնիվ մտավորականի սկզբունքային դիրքորոշումը երկրի համար վճռորոշ հարցերում:

«Անթեղված կրակ»-ն ընթերցվում է հետաքրքրությամբ: Այն կիստաքրքրի երկրի ճակատագրով ապրողներին:

Սեփ. լրատվություն

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ

ԶԻՆՎՈՐԻ ՀԱՄԱՐ ԿՅԱՆՔԸ ՉԻՆԱՅԱԾ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ



Մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության բաղկացուցիչներին...

հառնեց իսկական հայրենասերը, խիզախ մարտիկը...

Պետրոս Ղևոնդյանի՝ Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ուսանողի սովորելու տարիներին սկսվեց Արցախյան գոյապայքարը...



Չղջառումներով լրացնում են այդ բացը: Հուլի-գերեկույթին մասնակցում էին դպրոցի տնօրինությունը...

կան դպրոցի զինղեկն է և հուզված ու նաև մեղավորության զգացումով ներկայացրեց դեպքի մանրամասները...

«Այդ տղաների առջև խոսք տվեցի, որ եթե որդի ունենան, Պետրոս անունով կկոչեն: 10 տարի հետո ծնվում է որդիս՝ Պետրոսը...

Հերոսի մասին պատմություններն առավել մեծ լիցք ստացան դպրոցականների հայրենասիրական երգերի զեղեցիկ կատարումներով:

Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ


ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻՉ

Հայրենասիրությունը իր արյան մեջ է աշխարհի գալիս յուրաքանչյուր մանուկ, մենք այն ժառանգություն ենք ստացել մեր պապերից:



Հայրենասիրության օրհնակելի դաս էր Շահումյանի շրջանի եղբայրների պետական մանկապարտեզում կազմակերպված միջոցառումը...

«Մեր բանակը ծնունդն է մեր ժողովրդի հավաքական իղծերի ու երազանքների, ուստի պետք է մշտապես յուրաքանչյուրիս սիրո, գուրգուրանքի ու հոգածության կիզակետում լինի: Մենք առավել ևս հպարտանալու իրավունք ունենք մեր բանակով»,- այսպիսի հուզիչ երանգով տրվեց միջոցառման մեկնարկը:



Երեխաներն առանձնահատուկ ջերմությամբ էին պատրաստվել, քանի որ գրեթե բոլորի ծնողները Հայոց բանակի զինծառայողներ են: Նրանք խոնարհվեցին և մեկ րոպե լռությամբ հարգեցին մեր երկրի անկախության ու բանակի կայացման ճանապարհին նահատակված հերոսների հիշատակը:

Մարիամ ՓԻԼԱՅՅԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՅՉ

Ասկերանի եղծոն Բարսեղյանի անվան միջակարգ դպրոցի բարձր դասարանի աշակերտները դպրոցի տնօրինության և վարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանի գլխավորությամբ Հայոց բանակի կազմավորման հերթական տարեդարձի առթիվ այցելեցին Ասկերանի Ն գործնառն: Փոխտնօրեն Արիս Գյանջումյանը տոնա-

Ավանեսյանը: Տնօրենը ազատ ու անկախ Արցախը խորհրդանշող նկար նվիրեց գործնախին:

Երկուստեք հնչեցին Երախտագիտության խոսքեր: Չորսամասի կողմից դպրոց-բանակ-հասարակություն կապի ամրապնդման համար դպրոցին հանձնվեց շնորհակալագիր:

Իրավամբ, Հայոց փառապանծ բանակի կազմավորման օրը համազգային տոն է, և մեր լինելությունը պայմանավորված է ամուրի ու կայացած բանակով: Հայոց բանակը մեր ազգային նվաճումների մեծագույն արժեքներից է, ամենամահաբաժնուն ու կենսականը, որի կուռ ու անասան հիմքերի վրա կերտվում են ազգի և երկրի ներկան ու ապագան: Տարածաշրջանի ամենամարտունակ մեր բանակի ամեն մի զինվոր հզոր է ու անպարտ: Հայոց բանակի կազմավորման օրը տոն է բոլոր նրանց համար, ովքեր դարձել են Հայրենիքի պաշտպան, Հայրենիքի վահան և իրենց ուրույն ներդրումն ունեն բաղձալի հաղթանակի հասնելու գործուն:

Նամատիպ միջոցառումները հայրենիքի ապագա պաշտպանների մոտ մեծապես արժևորում են Հայոց բանակի, նրա զինվորների անուրանալի դերը, նրանց սխրանքները: Եվ իզուր չէ, որ պատանիները հետաքրքրվում էին զինվորների առօրյայով, քանզի ժամանակ անց Հայրենիքի պաշտպանության սուրբ գործն իրենց է վստահվելու: Շրջանի դպրոցներում բավականին աշխատանքներ են տարվում մատաղ սերնդի հայրենասիրական ոգին մշտաբուն պահելու գործուն:

Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱ՛Յ ԶԻՆՎՈՐ...

Շնորհավոր տոնդ, հայ՛ զինվոր... Մենք այստեղ միասին ենք, դու՛՛ հեռու քո մտերիներից ու հարազատներից, հեռու քո տնից ու ընտանիքից, մենք՝ տաք սենյակներում նստած, մինչդեռ դու կանգնած ցրտին ու ձյունին, սառնամանիքին, մենք քնում ենք, մինչդեռ դու պիտի արթուն լինես, մենք անհանգստանում ենք, որ մեր երեխան չընկնի վազելիս, քո անհանգստությունն այլ է. դու պիտի ամեն վայրկյան զգոն լինես, ուշադիր ու խիստ զգուշավոր... Քո արած գործն անգնահատելի է, քաջությունդ՝ օրհնակելի, զոհաբերությունդ՝ գովելի...

2017-ը ևս Հայոց բանակի ու հայ ժողովրդի համար դժվարին տարի էր՝ պայքարի, քաջության ու հերոսացման տարի: Տարի, որ խլեց նաև զինվորների կյանք... Ամեն զոհված զին-

վոր՝ մեծագույն կորուստ բանակիս ու ազգիս համար, ամեն մեկիս համար, ու ամենևին էլ կարևոր չէ՝ ճանաչում ենք անձամբ, թե ոչ: Բայց հերոս հայ զինվորը ցույց տվեց, որ ամուր կանգնած է, որ չի թուլացել երբեք ու չի պատրաստվում տեղի տալ, նահանջել... Ապրեք, տղերք: Այսօր էլ հակառակորդը շարունակում է դավեր նյութել, բայց սահմանին կանգնած զինվորն արթուն է:

Շնորհավոր տոնդ, զինվորի՛ մայր: Գուցե ոչ ոք այդպես էլ չկարողանա պատկերացնել ու հասկանալ քո վախը, անհանգստությունը, գուցե ոչ ոք չիմանա, թե ինչպես ես քո զինվոր որդու հետ միասին լարված՝ զիջերն արթուն անցկացնում, որդիդ՝ խրամատում, դու՛՛ մահճակալիդ առջև ծնկած աղոթելով... Դու էլ ես

հերոս, այսօր քո տոնն էլ է...

Հունվարի 28-ին տոնում ենք Հայոց բանակի օրը: Բանակ, որ երաշխիքն է պետության անվտանգության, բանակ, որտեղ պարտավոր է իր պարտքը կատարել յուրաքանչյուր հայորդի, բանակ, որ ի սկզբանե ստեղծված է խաղաղության համար:

Այսօր մենք ունենք բանակ, հերոս զինվորներ, անկուրումն ոգի: Թող խաղաղություն լինի մեր սահմաններում, և Աստծո օրհնությունը հեղեղի Հայաստան-Արցախ աշխարհը: Այլևս չլսենք մահվան գույժ զինվորի, ոչ մի գնդակ չնոտենա զինվորին: Թող Աստծո պահպանությունը լինի թե՛ հայ զինվորի ու սպայի, թե՛ հայոց սահմանի վրա: Շնորհակալ ենք բոլոր այն քաջարի մարտիկների համար, ովքեր

պահպանում են հայրենիքի սահմանները: Գլուխ ենք խոնարհում բոլոր նահատակված քաջերի ու նրանց ընտանիքների առջև: Թող Աստված օրհնի և պահպանի ծառայող ու ծառայության պատրաստվող մեր տղաներին:

Թող էլ պատերազմ չլինի, թող էլ կյանք խլող գնդակ չլինի, թող ջնջվի «թշնամի» բառը մեր բառարաններից, ու թող հերոսներն այսուհետ լինեն ոչ թե պարտադրված պատերազմում հաղթողները, այլ անպատերազմ, խաղաղ պայմաններում գյուտեր ու հայտնագործություն անող երիտասարդները:

Արթուր ԴԱԼԼԱՔՅԱՆ
Քաշաթաղի շրջանի Միլիկի
միջնակարգ դպրոցի զինղեկ

ՇԱՐՈՒՄ-30

ՏԱՐԻՆԵՐԻ ԴՆՈՎԻՑ

Ամեն անգամ, երբ մտովի վերհիշում եմ ապրած տարիները, թանձր վարագույրի նման մի բան շղարշում է կյանքիս երիտասարդական տարիների մի հատված, որ շատ-շատերի համար նույնպես լի էր տառապանքներով, ցավով ու վշտով և ավստասանքով: Բայց այդ շղարշը հետո արագորեն պատռվում է ու ամհետանում իմ տեսադաշտից, որովհետև նրա ծալքերի գորշագույնն ու ծխի և մրի, արյան հոտը, վախի ու սարսափի զգացումն այլևս ետևում են մնացել: Ու ես երջանիկ, շատ հաճելի զգացողություն եմ ունենում այն գիտակցումից, որ այսօր ապրում եմ իմ ազատ, անկախ, հայաշունչ, օրեցօր գեղեցկացող Արցախ աշխարհի քաղաքամայր Ստեփանակերտում:

Քաղաք, որտեղ անցել են ուսանողական քաղցր հուշերով լեցուն տարիներս, որտեղ կյանքի ուղեգիր եմ ստացել, որից, սակայն, ընդամենը վեց տարի բաժանվելով՝ ավելի եմ կարողացել ու արգելված պտուղի նման տենչացել, ցանկացել նրան...

Իսկ բաժանումն իմ քաղաքից տարավ ինձ հինավուրց հայկական Գարդման աշխարհի Քարհատ շրջանը, որին թուրքերը Դաշքյասան էին կոչում: Դժվար էր նորավարտ ուսուցչուհուս համար թուրքաբնակ ավանում ապրելն ու աշխատելը: Դժվար էր, քանի որ ամեն քայլ-կախիկի օտարաշունչ բառեր էին հնչում, ու օրեցօր թուրք լանուկների թիվն աճում էր այնքան արագ, որքան արագ դատարկվում էին հայերի տները...

Ու եղավ այն, ինչից վախենում էի... Ու

նաև այն, ինչին վեց տարի անընդհատ սպասում էի... Թողած տուն ու տեղ՝ հանց բնավեր հավք, Գարդման աշխարհին որպես սուրբ մատուցե պահպան թողած մեր նախնիների շիրիմները թանկ, հազիվ փրկվելով թուրքերի ձեռքից, հուշերիս անգին քաղաքը եկանք: Ու ծվարեցինք Սիմոնի աղբյուր կոչված թաղամասում՝ հյուրասեր հայի տան ներքնահարկում:

Ահա տարիների հեռվից աչքերիս առաջ ուրվագծվում են տանկեր ու զրահատեխնիկա, զրահաբաճկոն հագած, ինքնաձիգներ ուսած ռուս զինվորներ, որոնք պատնեշում էին ու թույլ չէին տալիս անցնել քաղաքի կենտրոնական հրապարակով, փողոցներով: Ամեն ինչ արգելված էր. որոշակի ժամերին տնից դուրս գալը, խմբերով հավաքվելը... Սով էր, գործազրկություն, ամենուր՝ ավերածություններ: Լույս չկար, գազ չկար, չկար ջեռուցում, ջուրն էր ու խավար ու շրջափակում... Կրակե տարափ էր տեղում Ստեփանակերտի վրա Շուշիից, Աղդամից, ամեն կողմից... Ահավոր տարիներ էին...

Սակայն ազատատենչ Արցախս դիմակայեց այդ ամենին: Արցախիս քաղաքի գավալները չէրկնչեցին թշնամու առջև, քանզի ազատությունը թանկ էր նրանց համար, քանզի մեր մեծերն ու նախնիներն էին մեզ պատգամել՝ ապրել քաղաք, այլ ոչ ծնկաչոք ...

Վիրավոր Արցախս ապրեց ու ապրում է ահա վերածնված 30 տարի՝ հազարավոր քաջորդիների կյանքի գնով: Առհավատչյա՜մ մարդկանց, երեխաների զվարթ, ուրախ դեմ-

քերը, լույսերով ողողված փողոցները, իրիկ-նային զով հովը՝ խառնված ցերեկվա տապին, բարձրահարկ, նորառ շենքերն ու շինությունները, կանաչազարդ ծառերն ու թփերը, աչք շոյող մաքրությունը: Ու սիրտս ուռչում է հպարտությունից, գիտակցումից այն, որ պատերազմի հետքերն իսպառ վերացել են հարազատ քաղաքիցս, որ այն օրեցօր ավելի ու ավելի է գեղեցկանում: Ու բերկրանքս ավելի է բազմապատկվում, երբ կամաց-կամաց փակվում են կյանքիս գորշ վարագույրները, և քաղաքի կենտրոնական հրապարակին հարող նորակառույց պուրակում ուրախ ու զվարթ եռագույնով շատրվանում են զովաշունչ ջրերը, ու լսվում է տոնական համերգը վարող հաղորդավարի ձայնը. «Ազատ ու անկախ Արցախ...»: Հանգստացնում է, որ Արցախս կա ու կգոյատևի՝ քանի դեռ նրա նոր օրը կերտում ու զովեցրում են ազատության համար մարտնչած հերոս տղաների ուսուրերն ու դուստրերը: Հաստատ համոզված եմ, որ այլևս ոչ ոք չի կարող և իրավունք չունի տնօրինելու նրա բախտը: Եվ ամենաթանկ բանը՝ ազատությունը, որ ձեռք է բերվել արյան գնով, այլևս ձեռքից չենք տա...

Փառք քեզ, վերածնված Արցախ աշխարհ, փառք քո ազատատենչ զավակներին, որոնք շնորհիվ ձեռք է բերվել այսօրվա ազատությունն ու անկախությունը:

Էլմիրա ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտի հ.12 հ/դ, փնօրեն

ՀՈՐՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Քո ապագան ես եմ, հայր իմ և քո թողը, Քո ապագան այն գարունն է, որ չես տեսել, Բայց նվեր ես տվել երկրին քո հարազատ: Քո ապագան մի բուռ հողն է՝ արյամբ թրծված, Որ վկան է քո գոյության՝ անխտ վկան:

Քո ապագան այն առուն է՝ հունը կորցրած, Որ կորստիդ ցավից տնջում, Պղտորվում է ու հեղեղվում:

Քո ապագան այն մանուկն է՝ քեզից ծնված, Որ անունը պիտի կրի քո սրբացած:

Քո ապագան այն երազն է ու այն տենչը, Որ ես պիտի շիրմիդ առաջ ծնկած երդվեմ, Քանզի անցյալն ու ապագան կապող թելը ես եմ, հայր իմ, ես՝ քո ներկան:

Ու թե ես էլ հույսի ճամփին մի լույս վառեմ իմ Արցախում,

Դու երկնքում լավ իմացիր:

Քո ապագան ես եմ, հայր իմ ու քո թողը:

Գոհար ԱՐԱՍԱՐՅԱՆ
Սպեկ. հ.12 հ/դ. հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ

Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցում կազմակերպվեց տոնական միջոցառում՝ նվիրված Հայոց բանակի կազմավորման 26-րդ տարեդարձին: Կազմակերպիչները 8-րդ դասարանների դասղեկներ Անետա Տոնյանն ու Անահիտ Ներսիսյանն էին: Դահլիճը կահավորված էր ՀՀ և ԱՀ խորհրդամիջներով: Ոգևորող էր այն հանգամանքը, որ մասնակից աշակերտներն ու կազմակերպիչ ուսուցիչները կրում էին զինվորական համազգեստ:

Գրական-գեղարվեստական ցերեկույթը հազեցած էր, հետաքրքիր ու բովանդակալից: Աշակերտներն ասումնջում էին արտահայտիչ, հպարտությամբ ու վարպետությամբ ցուցադրում զինվորական առօրյային վերաբերող դրվագներ: Նրանք ընդգծեցին, որ հայրենիքի պաշտպանությունը, իհարկե, ողջ ժողովրդի պարտականությունն է,

բայց առանձնահատուկ դերը երկրի Ձինված ուժերինն է: «Հպարտությամբ կարելի է ասել, որ Հայոց բանակը տարածաշրջանի ամենամարտունակ բանակներից մեկն է, քանզի նրա զինանոցի ամենաուժեղ և անպարտելի զենքը հայրենասիրությունն է... Սեփական բանակ ունենալու հայրենի երազանքն իրականություն է արդեն 26 տարի: Հայոց բանակը մեր պետականության լինելության յուրահատուկ խորհրդանիշն է, աշխարհում մեր տեղն ու դիրքն ապահովողը», ասացին դպրոցականները:

Դպրոցի երաժշտության ուսուցչուհի Դիանա Աբրահամյանի ուսուցանած ռազմահայրենասիրական երգերն ու պարերը մի առանձին շուք հաղորդեցին միջոցառմանը: Ներկա էին ԼԴՀ ան-

հայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Վերա Գրիգորյանը, Ն գործառնասի կապիտան, սպա Բաբայանը, դպրոցի նախկին տնօրեն Վիլեն Դահրամանյանը:

Շնորհավորանքի խոսքից հետո Վերա Գրիգորյանը կազմակերպության «Հայրենիք և հավատ» մեդալով պարգևատրեց դպրոցի տնօրեն Արթուր Ավետիսյանին, նախկին տնօրեն Վիլեն Դահրամանյանին՝ բանակ-հասարակություն կապի ամրապնդման և աշակերտների մոտ ռազմահայրենասիրական դաստիարակություն իրականացնելու համար:

Կազմակերպիչներ Անետա Տոնյանի և Անահիտ Ներսիսյանի ջանադիր աշխատանքի շնորհիվ միջոցառումն անցավ ջերմ և անմիջական մթնոլորտում:

Հանդիպման վերջում Ն գործառնասի կապիտան, սպա Բաբայանն անցկացրեց արիության դաս: Նա ներկայացրեց ՀՀ ՁՈՒ կազմավորման համառոտ պատմությունը և ընդգծեց, որ այն ստեղծվել է բարդ ու հակասական ժամանակաշրջանում. աշխարհաքաղաքական դաշտում խորհրդային Սփոթյունն ապրում էր իր գոյության վերջին ամիսները՝ փլուզման շրջանը, իսկ տարածաշրջանում սկսվել էր միջերկրակյան, տարածքային պատերազմ հայերի և ադրբեջանցիների միջև: Հանգամանորեն ներկայացվեցին նաև Ձինված ուժերի զարգացման ժամանակային փուլերը:

Ներկաները դահլիճից հեռացան մեծ բավականություն ստացած:

Նանար ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԻՇՆԵՔ, ՈՐ ԱՇԽԱՐՀԸ ԻՐԱՎՈՒՆՔ ԶՈՒՆԵՆԱ ՄՈՌԱՆԱԼՈՒ...

Փետրվարի 6-ին Նոր Հայկաջուրի դպրոցում կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված Արցախյան պատերազմում զոհված 12 համազուղաջիների հիշատակը հավերժացնող փառքի անկյունի բացմանը և ՆԶՊ նորաստեղծ դասանյակի՝ ապրիլյան քառօրյա պատերազմում զոհված մայրը Սուրեն Մելքունյանի հիշատակին անվանակամանը:

Ներկա էին Սուրեն Մելքունյանի ծառայակից ընկեր Նվեր Հարությունյանը, Նոր Հայկաջուրի համայնքի ղեկավար Արտակ Դանիելյանը, համազուղաջիներ, ուսուցիչներ, աշակերտներ: Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Ջուլիետա Իշխանյանը:

Միջոցառումը վարում էր տողերիս հեղինակը, որը ներկա-



ների կողմից շնորհակալություն հայտնեց դպրոցի ՆԶՊ ուսուցիչ Արսեն Պետրոսյանին՝ անձնական միջոցներով ՆԶՊ դասասենյակ կառուցելու, գյուղի 12 զոհերին նվիրված փառքի անկյուն ստեղծելու համար: «Նման հայրենամեղեր աշխատանքը դրվատանքի է արժանի: Այն հավերժացնում է հայրենիքի համար իրենց կյանքը զոհած հայորդիների հիշատակը: Եվ աշակերտների հոգում սերմանում է հարգանք ու երասխազիտության զգացում դեպի նրանք, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին Արցախի պարզ երկնքի, պայծառ օրվա, մանկանց խիճը ու ծիծաղի, հայ օջախում հարսանիքի ու կնուքի ժամին հնչող զուռնա-դիլի անսպառ ձայնի համար»:

Միջոցառման առաջին հատվածում աշակերտների կողմից հնչեցին բանաստեղծություններ՝ նվիրված Հայոց բանակին, հայրենիքին, զոհված տղաներին, նրանց հիշատակը հավերժացնող հուշարձանին:

Երկրորդ հատվածում ներկայացվեց մայրը Սուրեն Մելքունյանը՝ որպես մարդ, հայր, որպես խիզախ հայորդի:

Սուրեն Մելքունյանը ծնվել է 1979թ. հոկտեմբերի 10-ին Հարդուքի շրջանի Տուսի գյուղում: Սովորել է գյուղի դպրոցում: Ավարտել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը: 2001 թվականից ծառայել է ԼԴՀ մի շարք գործառնասերում: Ապրիլի 1-ին, երբ ադրբեջանական դավադիրները մտել էին սահմանագիծ և ռազմական գործողություններ սկսել, Սուրեն Մելքունյանը իր չորս ընկերների հետ մեկնում է առաջնագիծ, որտեղ շարքային զինվորների հետ

խիզախորեն մարտնչում է և սպա ընկերների հետ կյանքը տալիս հայրենի հողի համար:

Հայրենի հողը թրթով չեն պահում, Ու հայրենիքի պատմությունն անգամ թուրք ու գրիչով չի գրվում միայն: Պատմությունը մեր խիզախ հայորդյաց Արյամբ է սերտվում, կերտվում քաջաբար, Սահմանի կանգնած ցրտից, ամձրկից Ձյան տակ ամուր կանգնած զինվորի Կուռ, ամուր բազկով Ու սպաների աննկուն կամքով: Այդ սպաներից մեկն էլ Սուրենն էր, Մայրը խիզախ, Որ ընկերներին օգնության հասավ, Բայց մարտի դաշտից էլ ետ չդարձավ...

Սուրեն Մելքունյանը ստեղծել է ամուր ընտանիք: Նա ամուսնացել էր իր դարոցական առաջին սիրո՝ Արևիկի հետ: Սուրեն Մելքունյանը Արևիկի հետ հաճախել է միևնույն մանկապարտեզը, սովորել նույն դպրոցում, ուսումը շարունակել Երևանում: Եվ ով իմանար, որ մանկության ընկերը, ամուսինն ու չորս որդիների հայրը պիտի մի օր սիրելի Արևիկին միայնակ թողներ, որ նրանց չորս որդիներն էլ Արևիկի նման անհայր պիտի մեծանային:

Սուրեն Մելքունյանի կինը հստակ հասկանում է ամուսնու՝ իր առաջ դրած պարտավորությունը՝ 4 որդիներին դաստիարակել նրա օրինակով, մեծ հպարտությամբ, ցավը խեղդելով իր սրտում՝ ժպտալ, որ բախկներն էլ ժպտան նրա հետ:

Միջոցառումը իր մանկական քաղցր ու ջինջ ծայրով գեղեցկացրեց փոքրիկ Մարիամ, որը երգեց «Բալլադ զինվորի մասին», «Արցախի հողում», «Մարտում» երգերը: Նրա մանկական հոգուց բխում էր հայրենիքի հանդեպ սերը, հարգանքը իր և իր պես շատ մանուկների ժպիտի համար զոհվածների հանդեպ:

Դպրոցի IX դասարանի աշակերտներ Մերի Ներսիսյանը և Անդրանիկ Նազարյանը հանդիսավոր կերպով Սուրեն Մելքունյանի նկարը փակցրին ՆԶՊ-ի դասասենյակի պատին ու նկարի առաջ մոմեր վառեցին՝ իբրև անմար հիշատակի կրակ:

Այսօր Արցախի մի փոքրիկ հողում ծվարած հասանդաչեցին նորից տուն է կառուցում, օջախ է վառում Նոր Հայկաջուր վերանվանված այս փոքրիկ գյուղում: Եվ գյուղի փոքրիկ դպրոցում սովորող 31 աշակերտներին մենք՝ ուսուցիչներս, սովորեցնում ենք հայ մնալ, լինել հայրենասեր մեր հերոսների և մեր իսկ օրինակով: Սովորեցնում ենք հիշել և սրբացնել նրանց: Հիշել, որ աշխարհը իրավունք չունենա մոռանալու...

Մանուշ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆ
Նոր Հայկաջուրի
դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի

ԼԵՂՈՒ-ՆԱՅՐԵՆԻԷ

Փետրվարի 21-ը Մայրենիի միջազգային օրն է

ՄԵՐ ՆԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻՆ

Այս խորագիրն էր կրում փետրվարի 9-ին Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցում կազմակերպված միջոցառումը՝ նվիրված Մայրենիի միջազգային օրվան: Այն կազմակերպել էր 3-րդ դասարանի դասավար Իննա Մանասյանը, որն աշխատանքային կարճ գործունեության ընթացքում հասցրել է աչքի ընկնել հմուտ մանկավարժի ձիրքով, կազմակերպչական կարողություններով:

Միջոցառման խորագրին համահունչ ձևավորված բեմի կենտրոնում հայերենի առաջին ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցի մեծադիր նկարն է՝ շրջապատված 39 քաջ զինվորներով, որոնց շնորհիվ հայ ազգը գոյատևել է և ինքնությունը պահպանել ու մինչ այսօր շարունակում է երթը դեպի լուսավոր ապագա:

Միջոցառումը հենց սկզբից խոստումնալից էր. Զ.Սահյանի «Մեր լեզուն» բանաստեղծության խոսքերով գրված երգի հոգեպարար հնչյունների ներքո բեմ բարձրացան դասարանի տասը երեխաները, որոնց շուրթերից հնչեց հանդեսի նպատակը՝ մեր ոսկեդենիկ մայրենին աշխարհի հնագույն և զարգացած լեզուներից մեկն է, որն ունի հազարամյակների պատմություն: Նշվեց մայրենի լեզվի՝ օդ ու ջրի և հացի նման անհրաժեշտությունը:



Լեզուն գործածվելուց ոչ թե մաշվում, հնանում, աղքատանում, այլ ավելի է հղկվում, մշակվում, նորանում ու զարգանում: Լեզուն, իրավ, մի գանձ է, որին չի կարող փոխարինել աշխարհի ոչ մի հարստություն: Միտենք, հարստացնենք մեր հայրենի գանձերը, մեր ոսկեդենիկ լեզուն. սա այն գաղափարն է, որ կարմիր թելի պես անցնում էր միջոցառման ողջ ընթացքում:

Երգը, երաժշտությունը, դիոլի խրոխտ ձայնը տարածվել էին դահլիճով մեկ, աշակերտների փոքրիկ ակտերը բռնկեցին բեմի «Մեսրոպյան տառեր», «Չայերեն», «Մեր լեզուն», «Ես հայ եմ» երգելիս:

Ապա հերթով երգվում են մշտապես բորբոք պահել հայոց լեզվի վահագնաբոց հուրը, շքանշանի պես կրել մեր ոսկեդենիկը, պահպանել այն, մեր սուրբ լեզվով արտասանել միայն արդարության խոսքեր, նրան տանել դեպի հավերժական կենդանություն...

Բազմաթիվ առած-ասացվածքները լեզվի կարևորության մասին, հայոց գրերի ստեղծման անհրաժեշտությունն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, հայերեն առաջին գրավոր նախադասության խորհուրդն իրենց մատաղ շուրթերով միջոցառման մասնակիցներին հաղորդելը մեկ անգամ ևս ապացուցեց, որ այսօրվա սերունդը պաշտում է իր գիրն ու գրականությունը, սիրում է իր ազգը, իր լեզուն, իր հավատն ու հայրենիքը: Անհնար է նկարագրել այն հուզմունքը, որ ապրեց միջոցառման յուրաքանչյուր մասնակից՝ լսելով մեծ լուսավորիչ, գրող, մանկավարժ Խ. Աբովյանի խոսքը փոքրիկ Մարիաննայի շուրթերով.

«Մի, լեզուն, լեզուն, լեզուն որ չըլնի, մարդ ինչի՞ նման կըլնի...»

«...Տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը դա՛յն թռնեցեք: Այո՛, հույսը,

հավատը լեզուն են պահում հայրենիքը: Ու այդ ամենը քաջ գիտակցեցին փոքրիկները, որոնք իրենց խոսքով մեկ անգամ ևս ապացուցեցին, որ քանակի մեջ չէ գլխավորը: Թեկուզ տասը հոգով՝ իրենց ուսուցչուհու հետ միասին աշխատելով՝ ապահովեցին բարձր որակ:

Ավելացնենք, որ ամեն խոսք, ասացվածք կամ արտասանություն զուգակցվում էր համապատասխան տեսասահիկով, որն ավելի մեծ շուք էր տալիս միջոցառմանը:

Վերջում, նշելով օրվա խորհուրդը, դպրոցի տնօրեն է. Գաբրիելյանն ասաց. «Այո՛, հայ ժողովրդի հետ դաժան ճանապարհ է անցել հայոց լեզուն: Բռնակալները փորձել են ամեն գնով հայերին ձուլել իրենց: Դա իրագործելու համար բռնացել են հայոց լեզվի վրա, սակայն՝ ապարդյուն: Գոյատևել է հայ ժողովուրդը, գոյատևում է հայոց լեզուն»:

Միջոցառմանը ներկա էին կրթության քաղաքային բաժնի մասնագետներ:

Անահիտ ՄԵՐՈՒՊՅԱՆ

ՉՈՆ ՇԵՐՈՍԻՆ

«Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր Գրայր Պողոսյանի հիշատակին

Իմ այս բանաստեղծությունը վերհուշ է իմ մասին, Այլ համոզմունք՝ ծնված քո մասին լսած հուշերից: Գիտե՞ս, Գրայր, լռությունը ոչինչ անել չի կարող Քեզանից հետո ծնված վիշտը թեթևացնելու համար, Ուստի այսօր բարձրաձայնում ենք, որ քո հեռացումից հետո Զպարտությանը կպահվի ու կծգվի քո կյանքի ժապավենը: Կկարողանա՞նք վիշտն օգտագործել իբրև կշեռք, չգիտեմ, Մեր մտքերի խաչներուկում մենք մեզ անգոր ենք զգում, Եվ բոլոր բառերը դառնում են անգույն ու տկար, Երբ դու մայր հողի արգանդում ես: Բայց քո հողե բարձի մոտ, երբ մեր աչքերը թացանան, Մենք պարտավոր ենք այդ հողը համբուրել Ու այդ ջերմությանը կենդանություն պարգևել քեզ: Գուցե դրանով հեռացնենք տխրության այն անմուն վարագույրը, Որ սահման է երկնային ու երկրային կյանքի: Մենք հասկանում ենք, որ քո փառքը կենդանություն է տալիս քեզ, Եվ մահը անգոր է դառնում տարածության մեջ, Իսկ ժամանակի գետը չի կարողանում քշել տանել Քո կյանքի հուշերից հյուսված շղթան: Այդժամ դու դառնում ես անցյալից ու ներկայից, Ապրելու կամքից կազմված պատմական հիշողություն, Արդարության ու ազատության մարմնացում: Ես ցավում ու վշտանում եմ այն մարդկանց համար, Ովքեր չեն հասկանում, որ ձեր հեռանալը հավիտենական ճիշ է Անարդարության դեմ, առանց վերապահումի նվիրում խաղաղության: Անցնում ենք բոլոր ցավերի, ուրախությունների միջով մտովի, Եվ ակնթարթորեն ապրում իրականություն, Ուր քո մասին պատմելը դրդում է մեզ Քայլել ու անցնել կյանքի քառուղիները Գլուխներս ոչ թե վար, այլ վեր պահած: Ու թեև դու քո մոր դողացող շուրթին երկու վանկ ես դարձել, Իմացանք, որ հպարտ ապրելու համար հպարտ հեռանալ գիտես Եվ հազարավոր սգո ծեսերի կիզակետում, Ժամանակի ու տարածության թագավորության մեջ Քեզ մենք զգում ենք, այլ ոչ՝ սգում...

Գայանե ՄԱԹՎՈՍՅԱՆ
Ճարտարի Զ. Պողոսյանի անվան
հ.5 միջնակարգ դպրոց

Դպրոց-բուհ

ՉԵՐՍ ՄԹՆՈՒՈՐՏՈՒՄ

Երաժշտությունը հիրավի համամարդկային լեզու է, իսկ բառերը լրացնում են այն: Երաժշտությունը միջնորդ է հոգեկան ու զգայական կյանքի միջև:

«Մեսրոպ Մաշտոց» համալսարանի ուսանողույանը և պրոֆեսորադասախոսական կազմին հաճելի անակնկալ մատուցեցին մայրաքաղաքի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի երգչախմբի սաները՝ ի դեմս նրա ղեկավար, ՄՄՀ դասախոս Լիլիթ Գրիգորյանի և դպրոցի տնօրինության: Երգչախումբի անդամները երգով ու պարով հանդես եկան ՄՄՀ դասախոսների և ուսանողների առջև:



Համերգը հազեցած էր երաժշտական տարբեր ժանրերով՝ ջազ, էստրադա, ժողովրդական երգ ու պար:

Դպրոցականները կարողացան հանդիսատեսին հաղորդել ուրախ տրամադրություն, միջոցառման մասնակիցը դարձնել նրանց: Համերգացանկում ընդգրկված էին նաև Մեծն Կոմիտասի ստեղծագործություններից:

Իսկ ահա հայկական ազգագրական պարի ժամանակ դպրոցականներին միացան ՄՄՀ մանկավարժություն և մեթոդիկայի բաժնի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողները:

Հետո կատարվեց Կոնստանտին Օրբելյանի «Փառք մեր հայության» ստեղծագործությունը, որը դարձել է համայն հայության հիմնը: Ըստ ծրագրի՝ այսքանով պետք է միջոցառումն ավարտվեր, բայց այնպիսի ջերմ մթնոլորտ էր ստեղծվել, որ երեխաները չէին ուզում իրաժեշտ տալ. խնդրեցին ղեկավարին՝ շարունակել երգել ու պարել: ՄՄՀ աշխատողներից էլ ցանկություն հայտնեցին դիմում հանդես գալ երեխաների համար, ապա անցան դաշնամուրին:

«Մեսրոպ Մաշտոց» համալսարանի ռեկտոր Դոնարա Գաբրիելյանը շնորհակալություն հայտնեց դպրոցականներին, նրանց ղեկավարին և հ. 7 հիմնական դպրոցի տնօրինությանը՝ նման զեղեցիկ հանդիպման առիթ ստեղծելու համար:

ՆԵՒԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄԵՐ ԲԱՆԱԿԻՆ

Մարտունու Ն.Ստեփանյանի անվան հ.1 միջնակարգ հոսքային դպրոցում հանդիսավորապես նշվեց Հայոց բանակի 26-րդ տարեդարձը: Ձեկունցումով հանդես եկավ դպրոցի ֆիզդեկ Ա.Սաչատրյանը:

Հրավիրվածների շարքում էին զինվորականներ, որոնք նույնպես մասնակցություն ունեցան: Մեկ տարի պարտադիր ծառայության մեջ գտնվող զինվոր թովմաս թովմասյանն իր երգացանկից կատարեց մի շարք երգեր՝ մեծ բավականություն պատճառելով հանդիսատեսին:



Իմ հայրենիք, հազար ու մի փորձությունների միջով ես անցել և կարողացել դիմակայել ու հաղթել: Քո հաղթանակներն ու սխրանքները մեր քաջ զինվորների արյամբ են օժված: Բազում կրակների միջով անցած զինվորի սխրանքն ուսանելի է գալիք սերունդների համար, քանզի նրանց է վիճակված կրկնապատկելու մեր հաղթանակները:

Հաղթանակը Արցախ աշխարհի եկավ հայ զինվորի խրոխտ քայլերով: Արցախյան գոյամարտն ի հայտ բերեց նորոյրա հերոսներ: Եվ այսօր մենք հպարտորեն ասում ենք. «Մեր բանակը, իրոք, հաղթանակած ազգի բանակ է: Վկան մեր ժողովրդի միասնությունն է, որն ապրում է իր զինվոր զավակների ճակատագրով»:

Քնարիկ ԲԱՐԱԼՅԱՆ

ԸՆԹԱՑՔ

Հորելյան

ԴՈՒ՝ ՆԱՐ ՈՒՍՈՒՑԻՉ, ՄԵՆՔ՝ ՆԱՐ ԱՃԱԿԵՐՏ...



Խելացի կանանց մեջ՝ ամենագեղեցիկը, Գեղեցիկ կանանց մեջ՝ ամենախելացին...

Լրացավ ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Անահիտ Աբայանի ծննդյան 70-ամյակը մարդ. որն իր բարի գործերով և մարդկային արժանիքներով միշտ օրինակ է եղել շրջապատի համար:

Անահիտ Աբայանը ծնվել է 1948թ. հունվարի 30-ին Մարտունու շրջանի Աշան գյուղում՝ անվանի գյուղատնտես Միքայել Աբայանի ընտանիքում: Մայրը՝ Թամարա Աբայանը, մի բարեհամբույր և համեստ կին, ուսուցիչ էր գյուղի դպրոցում, որի մասին խոսում էին ընդգծված հարգանքով: Ահա որտեղից են գալիս Ա. Աբայանի անսպառ բարությունն ու համեստությունը:

1965թ. փայլուն գնահատականներով ավարտելով գյուղի դպրոցը՝ Ա. Աբայանն ընդունվում է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, որտեղ շատ շուտով արժանանում է ակադեմիկոսի կոչման, Արարատ Ղարիբյանի, Վաչե Պարտիզյանի, Արշակունյաց Բաբայանի, Աշոտ Աբրահամյանի և մյուս մանկավարժների հարգալից ուշադրությանը: Բուհն ավարտելուց հետո, չնայած գայթակղիչ առաջարկություններ եղան մայրաքաղաքում մնալու, հայրենի գյուղին օգտակար լինելու նրա ցանկությունը, սակայն, մեծ էր ու պարտավորեցնող, և հաջորդ ուսումնական տարում (1969թ.) Ա. Աբայանն արդեն մայրենիի ուսուցչուհի էր Նոր-շեն գյուղի դպրոցում: Աշակերտները և ուսուցչական կոլեկտիվը հասցրել էին սիրով կապվել նրա հետ, երբ Ստեփանակերտից եկան մի խումբ գործընդհարման մասնակցներ, որտեղ Ա. Աբայանն իր գեղեցիկ ելույթով հիացմունք պատճառեց մասնակիցներին: Ամեն պատեհ առիթով բանաստեղծ Ա. Խանյանը կպատմեր. «1974թ. գարնանը Մարտունու շրջանի Նորշեն գյուղի դպրոցում կազմակերպվել էր հանդիպում Արցախի գրողների հետ: Արցախում ստեղծվող պոեզիայի մասին զեկուցումով հանդես եկավ երիտասարդ մի ուսուցչուհի: Նրա գրական ընկալումներն ու դիտարկումները պահանջվող չափանիշների շրջանակներում, վերլուծում-

ներն ու գնահատումները ժամանակակից գրականության ընթացքի համապատասխան, Արցախի գրողների հունձքի արժևորումը զարմացրեց ու հիացում պատճառեց ներկա գրողներին: Այդ երիտասարդ, բանիմաց, թխահեր ուսուցչուհին Ա. Աբայանն էր: Ծանոթանալով՝ իմացանք, որ նոր է ավարտել Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը և բուհի ղեկավարությանը խնդրել, որ իրեն ուղարկեն հայրենի Արցախ: Ու կատարվել է նրա խնդրանքը:

Երբ Ստեփանակերտ վերադարձա, մեր նորաստեղծ մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բազմավաստակ պրոֆեսոր Գուրգեն Անտոնյանին հայտնեցի, որ Նորշենում աշխատում է գրական նուրբ քիմք ունեցող մի աղջիկ, և ամբիոնը կշահի, եթե նա հրավիրվի աշխատանքի: Այդպես էլ եղավ»:

1974 թվականից Անահիտ Աբայանը Արցախի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի դասախոս է:

1986թ. Ա. Աբայանը հենց իր ավարտած բուհում «Աշոտ Գրաշի: Ստեղծագործական ուղին» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2005թ. արժանացավ բուհի դոցենտի գիտական կոչման: 2008թ. Ա. Աբայանը ստացել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ կոչում:

2008-2015 թթ. նա հայ գրականության և լրագրության ամբիոնի վարիչն էր, իսկ 2012 թվականից ԱրՊՀ պրոֆեսորի պաշտոնակատար է:

Վաստակաշատ գիտնական-մանկավարժի հրատարակած գիտական աշխատանքները՝ մենագրություններ, ձեռնարկներ, ուղեցույցներ և հարյուրից ավելի հոդվածներ՝ միշտ էլ հետաքրքրությամբ են ընթերցվել թե՛ ուսանողների և թե՛ մանկավարժների կողմից՝ նրանց համար դառնալով մասնագիտական ուղեցույցներ: Դրանցից են՝ «Կարոտի և սիրո կրակներ», «Ա. Գրաշու քնարերգությունը», «Ափյուռքահայ գրականությունը դպրոցական ծրագրերում», «Պարույր Սևակի ստեղծագործությունների դասավանդումը հանրակրթական դպրոցում», «Մանկական ձեռնարկ» և նույնքան ուսանելի բազմաթիվ գիտական հոդվածները:

Անահիտ Աբայանի վաստակը ժամանակին գնահատվել ու խրախուսվել է ԼՂՀ կառավարության և ԱրՊՀ-ի կողմից: Նա արժանացել է ԱրՊՀ հուշանդամների, պատվոգրերի, ԼՂՀ վարչապետի մեդալին:

Անահիտ Աբայանի մեծաթիվ ուսանողներն ամեն առիթով երախտագիտությամբ են շեշտում սիրած դասախոսի մարդկային և մասնագիտական բարձր արժանիքները և ավստանք հայտնում, որ հաճախակի չեն հանդիպում նրա հետ՝ դրական լիցքեր ստանալու:

Ինձ բախտ է վիճակվել լինել Անահիտ Աբայանի ուսանողուհին (1977-

1981թթ.), իսկ հետո՝ գործընկերը: Ինչպիսի՞ խանդավառությամբ էինք սպասում ընկ. Աբայանի դասերին, ինչպե՞ս էինք հիանում նրա գեղեցիկ ու ներդաշնակ արտաքինով և նույնքան գեղեցիկ ու ներդաշնակ խոսքով: Սիրելի դասախոսի հանդեպ ուսանողական իմ սերն ու հարգանքը քառապատկվել է տարիներ ի վեր վայելելով նրա ջերմ ու մայրական սերն ու հոգատար վերաբերմունքը: Իմ գործընկերները կվկայեն, որ Ա. Աբայանի՝ ամբիոնի վարիչ լինելու տարիներին դասերից հետո չէինք շտապում տուն գնալ՝ չկտրվելու հաճելի ու ջերմ մթնոլորտից:

Բազմիցս ականատես են եղել տարբեր կուրսերի ուսանողների ուրախ բացականչություններին, երբ նրանք իմացել են, որ ընկ. Աբայանն է դասախոսելու կամ գիտական աշխատանքի ղեկավարը լինելու: Սա է իսկական ու ճշմարիտ վարձքը ամեն ճշմարիտ մանկավարժի:

Ընկ. Աբայանի անսակարկ ու անշահախնդիր սերն ու վերաբերմունքը շրջապատի, ուսանողների հանդեպ ինձ միշտ հիշեցնում է Մայր Թերեզայի հայտնի խոսքը. «Եթե մեկին բարություն էք անում, այնպես արեք, ինչպես քարը կնետեիք ծովի խորքը»: Այսօր, այս խենթ ու խառը ժամանակներում, երբ «ճաշակում ենք քաղաքակրթության պտուղները», մարդու աթայանական տեսակն այնքան սակավադեպ է, որ կարելի է որակել «վերջին մոհիկաններ»: Շատ ցավալի է, բայց անշրջանցելի փաստ է:

Գիտամանկավարժական գործունեությանը զուգահեռ, չմոռանալով նշել, որ ամենից առաջ տիկին Անահիտը երկու արժանավոր զավակների արժանապատիվ մայր է, սիրված տատիկ, հարգված սկեսուր, օջախը շենացնող, ջերմացնող, կյանք ու շունչ տվող, հոգով ու մարմնով ընտանիքին նվիրված սրբուհուն:

Հարգելի՛ ընկեր Աբայան, ջերմորեն շնորհավորում ենք Ձեզ՝ ծննդյան 70-ամյակի առթիվ: Դուք այն բացառիկ մարդկանցից եք, որոնց կերպարում ներդաշնակված են մարդկային վեհ ու գեղեցիկ հատկանիշներ: Ձեր ճոխ ու շքեղ լեզվով, պայծառ մտածողությամբ, նուրբ դիտողականությամբ, անսահման բարությամբ և համեստությամբ վայելում եք ուսանողների, գործընկերների և շրջապատի սերն ու հարգանքը:

Դուք լուսե շողերով եք պարուրում ուսանողներին, նրանց տալիս գիտելիքներ Ձեր անսպառ շտեմարանից և դեռ շատ բան ունեք տալու:

Աստված թող Ձեզ երկար ու առողջ կյանքի տարիներ պարգևի, որ շարունակեք Ձեր ստեղծագործ ուղին, շարունակեք Ձեր կյանքի խորհուրդը գտնել բուհական զանգի ղողանջներում, լույսի և բարու հունդեր ցանել մատաղ հոգիներում:

Թող իրականություն դառնան Ձեր բոլոր մտահաղացումներն ու ցանկությունները:

Վ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ.

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ ԱՆԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ

Մեզ հետ ունեցած հարցազրույցում աշխարհի չեմպիոնը կիսվեց իր հաղթանակի բերկրանքով եւ՝ ոչ միայն:

- Նախ՝ շնորհավորում ենք հաղթանակի եւ աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար: Արմեն, երեւի թե մարզական երկար ճանապարհ եք անցել՝ մինչ գագաթին հասնելը:

- Շնորհակալ եմ եւ անկեղծ ասած՝ շատ ուրախ, որ հաղթել եմ մեծ մասշտաբով կայացած մրցաշարում: Տասնհինգ տարուց ավելի է՝ զբաղվում եմ մենամարտերով, բազմիցս հաղթող եւ լավագույն մարզիկ ու մարզիչ եմ ճանաչվել հայրենիքում անցկացվող տարբեր մրցաշարերի մասնակցելով, բայց ինչպես բոլոր պրոֆեսիոնալ մարզիկները, այնպես էլ ես երազանք ունեի դառնալ աշխարհի չեմպիոն: Շուտով երազանքս դարձավ նպատակ: Նպատակադրվեցի, որ պետք է աշխարհին ցույց տամ արցախցու անպարտ ոգին, եւ թող աշխարհն էլ ճանաչի մեզ: ՀՀ արմֆայթինգի ֆեդերացիայի նախագահ Հայկ Դուկասյանի աջակցությամբ եւ Արցախի պրոֆեսիոնալ արմֆայթինգի ֆեդերացիան սատարող Կոմիտաս Կարապետյանի հովանավորությամբ կարողացա մասնակցել աշխարհի առաջնությանը, ինչի համար անչափ շնորհակալ եմ: Երբ հայտնեցին, որ կարող եմ մասնակցել, սկսեցի համառորեն մարզվել, իսկ վերջին քսան օրը մարզվում էի Երևանում՝ ՀՀ արմֆայթինգի ֆեդերացիայի ներքո: Մտածում էի, որ պարտվելու իրավունք չունեմ. միայն՝ հաղթանակ: Զգում էի, որ հայրենակիցներս երկրպագում ու սպասում են իմ հաղթանակին, ուստի ավելի պատասխանատվությամբ էի վերաբերվում սպասվող մենամարտին: Նույնիսկ օտար երկրում ինձ մենակ չէի զգում, անգամ ռինգում քաջալերված էի այն մտքից, որ ողջ հայությունն է իմ թիկունքում, ու դա ավելի էր ինձ ուժ տալիս: Ես հպարտ եմ, որ արդարացրել եմ երկրպագուներին՝ հայության սպասումները, շնորհակալ եմ, որ բոլորը ինձ հետ եք:

- Կպատմե՞ք հաղթած մենամարտի մասին:

- Առաջին անգամ էի մասնակցում աշխարհի առաջնության: Անցած տարվա հուլիսին հայտնի դարձավ, որ պետք է մասնակցեմ աշխարհի առաջնությանը՝ չեմպիոն դառնալով ՀՀ արմֆայթինգ սեկցիոն առաջնության: Մենամարտից մոտ հինգ ամիս առաջ արդեն տեղյակ էի, թե ով է լինելու մրցակիցս եւ ուսումնասիրում էի նրան: Մրցակցիս՝ քսաներկու տարեկան, հիսունվեց կգ քաշային կարգում հանդես եկող, Ռուսաստանը ներկայացնող դարստանցի մարզիկ Արսլանալի Գաջիմուրզաեւի հանդեպ բավականին լուրջ էի տրամադրվել: Պարապում էի ծանրաբեռնված գրաֆիկով՝ կենտրոնացած միայն հաղթելու մտքի վրա: Ահա առաջին ռաունդի քսանվեցերորդ վայրկյանին տեխնիկական նոքաութի ենթարկեցի մրցակցիս եւ հաղթանակ գրանցեցի: Հայ ժողովրդի համար այդ նշանավոր օրը տարած հաղթանակս նվիրում եմ Հայոց բանակին:

- Որ՞ն է հաղթանակի երաշխիքը:

- Պատասխանատվության զգացումը քո եւ հայրենակիցներիդ առջեւ, պարապմունքներին լրջությամբ եւ խստությամբ հետեւելը, համառորեն առաջ ընթանալը դեպի նպատակ: Սրանք կարեւորագույն հատկանիշներ են մարզիկի համար:

- Սարգսի հաղթանակը ինչպե՞ս է անդրադառնում մարզիկի վրա:

- Մարզիչը բոլոր առումներով օրինակ է հանդիսանում իր սաների համար: Ամենամեծ ոգեւորությունը եւ ուրախությունը սաներիս մոտ եմ նկատում ու ինքս էլ ուրախանում նրանց ամեն մի հաղթանակով: Մարզիչի հաղթանակը միանգամայն դրական է ազդում մարզիկի վրա: Տեսնելով մարզիչի անսահանջ ձգտումը դեպի հաղթանակ եւ հետեւելով մենամարտերում նրա կողմից օգտագործվող հնարներին՝ մարզիկն օրինակ է վերցնում ու սովորում մարտավարություն: Իսկ մարզիչի ամեն մի հաղթանակ ոգեւորում է մարզիկին՝ ավելի վստահ առաջ գնալու եւ հաղթելու:

- Ձեզ համար աշխարհի չեմպիոն հռչակվելը մարզական կարիերայի գագաթնակե՞տն է, ի՞նչ եք մտադիր անել առաջիկայում:

- Պրոֆեսիոնալ մենամարտերով պարապող ցանկացած մարզիկի համար աշխարհի չեմպիոն դառնալը թերեւս ամենամեծ երազանքն է: Աննկարագրելի ապրումներ եմ ունենում հատկապես այն պահերին, երբ զգում եմ, որ այդքան երկրպագուներ կան, մարզասերներ, ընկերներ, որոնք կիսում են իմ հաղթանակը: Ինձ ուրախացնում է այն միտքը, որ սա լոկ իմ հաղթանակը չէ, այլ ն մեր բոլորի: Հաղթելուց հետո ինձ հոգեպես հանգիստ եմ զգում: Ասեմ, որ սա գագաթնակետը չէ: Մտադիր եմ շարունակել մարզական եւ մարզչական կարիերաս, ավելի ու ավելի հմտանալ պրոֆեսիոնալ մենամարտերի ոլորտում՝ մասնակցելով տարբեր մրցաշարերի: Մեծ հույս ունեմ, որ կհաջողվի Արցախի դրոշի ներքո հանդես գալ միջազգային ռինգում: Աշխարհը պետք է ճանաչի եւ իմանա, որ արցախցիները հզոր են ինչպես մարտադաշտում, այնպես էլ ռինգում: Մարզաշխարհը սիրող մարզիկի համար չկա գագաթնակետ. հաղթանակներով բոլոր դժվարությունները՝ քայլ առ քայլ պետք է առաջ գնալ: Այսօր իրականացրիք այս երազանքը, հասանք կոնկրետ նպատակի, վաղը՝ ուրիշ բարձունքներ կնվաճեք:

ՇՆՈՐԱՎՈՐԱՆԷ

ԽՈՍՔ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Գեղեցիկ է կյանքը... Ու երջանիկ է այն մարդը, ով կարողանում է ի վերուստ տրվածը էլ ավելի գեղեցկացնել իր գոյությանը, իր արարելով, իր արարելով:



Կիրոս, գրագետ, արհեստավարժ, տվող-պահանջող, իր տեսակի մեջ եզակի ուսուցչուհու՝ Նաիրա Գաբրիելյանին:

Արդեն երեք տարի է, ինչ տիկին Գաբրիելյանը կրթում ու դաստիարակում է մեր երեխաներին: Եվ այդ կարճ ժամանակահատվածում ստեղծել է ամենակարևորը՝ երեխաների մի համախմբված կոլեկտիվ, որտեղ մարդկային հատկանիշները վեր են դասվում, որտեղ կրթությունը համահունչ է դաստիարակությանը:

Արարչին մեր երախտագիտությունն ենք հայտնում, որ Ձեզ որպես պարզ մեզ է տվել ու ամբողջ սրտով շնորհավորում ենք Ձեր ծննդյան տարեդարձը:

Ապրեք առողջ, երկար... Թող որ Ձեր աչքերի փայլն ու ժպիտը երբեք չպակասեն: Թող Ձեր սիրտն ու հոգին լցված լինեն խաղաղությամբ: Թող Ձեր կյանքում որևէ անկատար երազանք չմնա...

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվ. հ. 2 հ/դ. 3-րդ «գ» դասարանի ծնողներ

ՏԱՐԻՆԵՐԻ ՎԱՍՏԱԿՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԸՆԴՈՒՄԵՆ ՈՒ ՊԱՏԻՎ



Ստելլա Առուշանյան: Ծնվել է 1938թ. փետրվարի 7-ին Ստեփանակերտում:

Մանկավարժական գործունեությունը սկսել է որպես ավագ ջոկատավար: 1956թ. նշանակվել է Ստեփանակերտի մանկապարտեզի ղեկավար, հետո նշանակվել պիոներջոկատավար քաղաքի հ.5 միջնակարգ դպրոցում, որի տնօրենն էր Ազնիվ Աղաբեկյանը:

1959թ. ամուսնացել է տեղափոխվել է Մարտակերտ, որտեղ միջնակարգ դպրոցում դասավանդել է ռուսաց լեզու: Ելնելով ընտանեկան հանգամանքներից՝ 1962թ. տեղափոխվել է Վաղուխա-Մոստ (այժմ՝ Գետավան) գյուղը և դասավանդել ռուսաց լեզու: 1967թ. աշխատել է Ստեփանակերտի հ. 3 մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի: 1968-70թթ.՝ հ.6 մանկապարտեզում: Բարեխիղճ, նվիրված աշխատանք համար պարգևատրվել է «Կրթության գերազանցիկ» կրծքանշանով:

1970թ. նշանակվել է Ստեփանակերտի պիոներների տան տնօրեն, որտեղ աշխատել է հինգ տարի: Հաջողությամբ երգի և պարի փառատուն կազմակերպելու համար պարգևատրվել է «Սոցիալիստական աշխատող» մեդալով: Ստեղծել է մանկական փողային նվագախումբ և թմբկահարների մանկապատանեկան խմբակ, որոնք մեծ ճանաչում և հաղթանակներ են բերել պիոներտանը և նրա ղեկավարին: Եղել է Ուսուցչների հանրապետական և Պիոներական տների տնօրենների համամիութենական համագումարների պատվիրակ: 1975-76թթ. աշխատել է հ.8 միջնակարգ դպրոցում՝ որպես երկարօրյա խմբերի դաստիարակ և տարրական դասարանների դասավար: Արցախյան պատերազմի տարիներին հ. 11 և հ. 3 դպրոցներում դասավանդել է ռուսաց լեզու: Հետպատերազմյան տարիներին ռուսաց լեզու է դասավանդել Ասկերանի շրջանի խանցք գյուղի դպրոցում, որով էլ ավարտել է ակտիվ մանկավարժական գործունեությունը:

Այսօր վաստակաշատ մանկավարժը վայելում է երջանիկ ծերությունը:

Երջանիկ ու հպարտ է այն ուսուցիչը, որի սաները հարուստ են գիտելիքներով, բարոյական որակներով և ստեղծագործական կարողություններով:

Այդպիսիներից է Ստելլա Առուշանյանը: Հիասքանչ ու գիտելիքներով հարուստ մի կին, որն իր կյանքի մեծ մասը նվիրել է մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը:

Ստելլա Առուշանյանը իրեն դուրսդրել է որպես խելոք, բանիմաց, աշխատանքին նվիրված մասնագետ: Որտեղ էլ որ աշխատել է, շրջապատվել է սիրող աշակերտներով ու կոլեկտիվի անդամներով: Եկավ մի պահ, երբ նա հարկավոր էր հարազատ գյուղին: Հայրենի խանցք

գյուղը ձգում էր նրան: Եվ նա չվարանցեց: Հայրենասեր ու հիասքանչ այդ կինը, չնայած իր տարիքին, աշխատանքի անցավ խանցքի հիմնական դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի:

Կոլեկտիվը նրան ընդունեց մեծ ուրախությամբ: Դպրոցին հարկավոր էին փորձառու ուսուցիչներ: Նա շատ արագ կարողացավ վաստակել թե՛

աշակերտների և թե՛ ուսուցիչների սերն ու հարգանքը: Իր ազատ ժամանակը նա նվիրում էր ետ մնացող աշակերտներին, որպեսզի նրանք էլ կարողանան հեշտ ու սահուն կարողալ ռուսերենի դասերը: Նրա մեղմ ձայնը և վերաբերմունքը աշակերտների նկատմամբ հիացնում էին բոլորին:

Խորհուրդ էր տալիս բոլորին լինել բարի, համբերատար, սիրել շրջապատը՝ ել բնությունը և ամենաշատը սիրել հայրենիքը: Շատ բան տվեց նա դպրոցին: Իսկ նրա երգերը ուղղակի դյուբնում էին բոլորին: Միշտ եռանդուն է, աշխատասեր, հոգատար բոլորի հանդեպ: Սիրում է հյուրասիրել իր թխած քաղցրավենիքներով:

Շնորհակալություն Ձեզ՝ Ստելլա Ջալալովնա, որ Դուք կաք, որ կարողացել եք Ձեր այդ մեղմությամբ մեղմել շատ ցասումներ:

Շնորհավոր Ձեր հոբելյանը: Եղեք միշտ առողջ ու երջանիկ:

Ձեր մայկին գործընկերների անունից՝

Սեդա ՉԱԲՐԻԵԼՅԱՆ Խանցքի հիմն. դպրոցի Նախկին դասավար, թոշակառու

ՄԱՅՐԵՆԻ ԵՎԻՐՅԱԼԸ



Ամենակարևոր երևույթը դպրոցում, ամենաուսուցողական առարկան, ամենալավ կենդանի օրինակը. Այս ամենն ամբողջաբանում է ուսուցչի մեջ...

Աղոթք Դիստերվեզ

Իր նվիրվածությամբ, մեծ պատասխանատվությամբ, մարդկային բարձր հատկանիշներով ուսուցչի վեհ կոչմանն է արժանացել Ստեփանակերտի Ա.Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նաիրա Թումանյանը:

Ծնվելով մանկավարժի ընտանիքում՝ նա մանկուց ծանոթ էր ուսուցչի դժվար և պատասխանատու աշխատանքին:

Ծնվել է 1958թ. հունվարի 14-ին: Հաճախել է Ստեփանակերտի հ. 2 միջնակարգ դպրոցը, մանկավարժական ինստիտուտում ուսումնառությունը ավարտելուց հետո աշխատանքային գործունեությունը սկսել նույն դպրոցում:

Նաիրա Թումանյանն օժտված է մանկավարժին հատուկ լավագույն զոժերով: Նա անաչառ է, խստապահանջ՝ իր և սաների նկատմամբ, հոգատար է, մեծահոգի, նպատակասույց: Վաստակաշատ ուսուցչուհին վայելում է աշակերտների, ընկերների հարգանքն ու սերը:

Նաիրա Թումանյանը հաճելի գրուցակից է: Նա մեծ ընթերցասեր է և ձգտում է ընթերցանության նկատմամբ սերը փոխանցել աշակերտներին: Իր ստեղծագործական ողջ ներուժն ու հոգու ջերմությունը նա շարունակում է նվիրել երեխաների կրթության և դաստիարակության սուրբ գործին: Աշակերտների մեջ սերմանում է սեր դեպի կրթությունը, ընտանիքը, հայրենիքը, սեր մայրենի լեզվի նկատմամբ: Իր գործին նվիրյալ մանկավարժը իրեն հանձնարարված յուրաքանչյուր գործ կատարում է մեծ պատասխանատվությամբ ու անաչառությամբ:

Մեր սիրելի գործընկերը 60 տարեկան է: Արտանց շնորհավորում ենք նրան՝ հոբելյանի առթիվ, ցանկանում նորանոր հաջողություններ, ուժ ու եռանդ, պողպատյա առողջություն և երկար տարիների երջանիկ կյանք:

Ստեփ. Ա.Ղուլյանի անվան հ.2 հիմն. դպրոցի մանկավարժական հանրույթ

ՄԵՐ ՈՒ ՀԱՐԳԱՆԷ՝ ԲԱՐԵՒՏԻՂ ԱՇԽԱՏԱՆԵՐՈՎ



Ամեն ինչի մեջ տեսնել ու փնտրել լավը, ամեն ինչում լինել լավատես. սա է Մարիետա Աթայանի սկզբունքը:

Կյանքում նա առաջնորդվում է համերաշխություն և սեր փնտրելով:

Լրացավ մեր գործընկերոջ 60- տարին: Մարդ, որ միշտ եղել է սիրված և ընտանիքում, և՛ շրջապատի կողմից:

Ծնվել է Բաքու քաղաքում: Գերազանցությամբ ավարտել է դպրոցը, մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը, որն ավարտել է 1979թ.:

Ուղեգրով աշխատանքի է անցել Մարտունու Ն.Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի:

Ունեցել է ակտիվ քաղաքական կենսագիրք, եղել է շրջխորհրդի պատգամավոր: Առասուր աշխատում է Մարտունու հ. 1 դպրոցում: Սկզբնական տարիներին դասավանդել է ռուսական դասարաններում, այնուհետև ռուսական բաժինը փակվելուց հետո սկսել է դասավանդել հայկական դասարաններում: Այդ անցումը, թվում էր, խոչընդոտ կառաջացներ ուսուցչուհու և աշակերտների միջև: Սակայն տարիների

փորձն ու քրտնաջան աշխատանքն ապացուցեցին, որ զբաղվելով ինքնակրթությամբ, կարողացավ հասնել դրական արդյունքների: Այժմ Մարիետա Աթայանը դասավանդում է միջնակարգ հոսքային դպրոցի ավագ դասարաններում և բազմիցս արժանացել է գովասանքի թե՛ աշակերտների, թե՛ ուսուցչական կոլեկտիվի կողմից:

Հարգանքը, պատիվը չի կարելի պահանջել, դրանք ձեռք են բերվում տարիների աշխատանքով, ցուցաբերած վերաբերմունքով, նվիրվածությամբ: Մարիետա Աթայանն այդ սերն ու հարգանքը, պատիվն ու վերաբերմունքը վաստակել է իր նվիրվածությամբ, պարտաճանաչության շնորհիվ: Երկար տարիների փորձ ունենալով հ.1 դպրոցում՝ նա կարողացել է աշակերտների մեջ բացահայտել դրական հատկանիշներ: Ընկերական շրջապատում նույնպես նա արժանացել է մեծ հարգանքի ու պատվի:

Մարտունու Ն. Ստեփանյանի անվան հ.1 միջնակարգ հոսքային դպրոցի ուսուցչական կոլեկտիվը տնօրեն Կ. Պողոսյանի ղեկավարությամբ շնորհավորում է Մարիետա Աթայանին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ:

Տիկին Մարիետա, թող Ձեր զխավերուն միշտ արևը շողա, Ձեր աչքերում անսպառ ժպիտը ցույց տա: Եղեք միշտ այդպիսին, ինչպիսին կաք՝ լավատես, բարի, ընկերասեր ու դրական լիցքերով լի:

Շնորհավոր տարեդարձը Ձերդ...

Մարտունու Ն. Ստեփանյանի անվան հ.1 մ/հ դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

ԱՆՍՊԱՌ ԵՌԱՆՂՈՎ ԼԻ



Կան մարդիկ, որոնք իրենց գոյությամբ լույս ու ջերմություն են սփռում շրջապատին, դառնում սիրելի և օրինակելի: Այդպիսին է վաստակաշատ ուսուցչուհի Տատյանա Շահնազարյանը:

Ծնվել է 1958թ. փետրվարի 6-ին Հաղորուք քաղաքում: 1974թ. ավարտել է Հաղորուքի միջնակարգ դպրոցը, նույն թվականին ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժինը, որն ավարտել է 1979թ.:

Աշխատել է Ալեհայրուրի, Պլեթանցի, Թաղասեռի ու Քաջաղի դպրոցներում, Հաղորուքի պրոֆեսիոնալ-մանրամասնում՝ որպես մաթեմատիկայի ուսուցչուհի:

1988 թվականից աշխատում է Հաղորուքի միջնակարգ դպրոցում՝ որպես դասավար: 2014-2015 ուստարվանից մինչև 2015-2017 ուստարին եղել է նաև դասավարների մեթոդավորման մասնագետ, այս ուսումնականից ուսումնական գծով տնօրենի տեղակալ: 2017թ. նրան շնորհվել է ուսուցչի որակավորման 1-ին աստիճանի տարակարգ:

Կենսուրախ, անսպառ եռանդով լի, աշխատանքին խորագիտակ մանկավարժն իր կյանքի իմաստը գտել է սովորեցնելու, գիտելիքները սաների սեփականությունը դարձնելու մեջ: Փորձառու ուսուցչուհին հնտորեն կարողանում է գտնել իր սաների հոգու բանալին: Բազում սերունդների համար նա հարթել է կանաչ ճանապարհ՝ յուրաքանչյուրի կողմից վաստակելով սեր ու հարգանք, ջերմություն և նվիրվածություն: Տ. Շահնազարյանն ունի դասավանդման իր ուրույն մեթոդներն ու հնարները: Նրա խոսքը մաքուր է, անաղարտ հայերեն, խրոխտ է, հուզիչ և տպավորիչ, ինքը՝ ստեղծագործական նախաձեռնությամբ լի:

Նրա աշակերտները փայլում են ոչ միայն կայուն գիտելիքներով, այլև առողջ տրամաբանությամբ ու կյանքի ճանաչողությամբ: Նա ձգտում է հարստացնել սաների բառապաշարը, զարգացնել կարողալու և վերարտադրելու տեխնիկան, իսկ մաթեմատիկական խոսքը ճշգրիտ է և տրամաբանաված: Առասուր ուսուցչուհին իր աշակերտների մեջ սերմանում է կյանքում հպարտ քայլելու արժանիքներ: Նա նաև նվիրված մայր է, անփոխարինելի տատիկ:

Շնորհավորում ենք ծնունդդ, սիրելի հոբելյար, ցանկանում ենք ուժ ու կրող մաշտոցյան գրերի ուսուցման ճանապարհին, ազնվական ձգտումների մշտական հաղթանակներ:

Հաղորուքի Մ. Մանվելյանի անվան միջն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

2017-2018 ՈՒՍԱՐՎԱԿԱՆ ԳՐՈՂ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՋԱՆԱՐԵՐԸ, ՀԱՐՋԱՏՈՄՍԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայոց լեզվի և գրականության գրավոր քննություն (փոխադրություն)

Փոխադրության նյութն ընտրում է ԳԹԿ-ն և Ստեփանակերտի քաղաքապետարանի, շրջանների վարչակազմերի կրթության ու սպորտի բաժինների միջոցով ուղարկում ուսումնական հաստատություններ:

Քննությանը հատկացվում է 90 րոպե: Տեքստը 2 անգամ ընթերցվում է ուսուցչի կողմից, որից հետո աշակերտները սկսում, ապա մաքրագրում են նյութը:

Փոխադրության գնահատման չափանիշները

Փոխադրությունը գնահատվում է առավելագույնը 20 միավորով՝ տրված տեքստի բովանդակության լիարժեք և գրագետ շարադրման դեպքում:

Փոխադրությունը գնահատվում է 2 բաղադրով՝

- 1. բովանդակության վերարտադրում,
2. շարադրանքի որակ:

Յուրաքանչյուր բաղադրիչի համար առավելագույնը տրվում է 10 միավոր: Յուրաքանչյուր բաղադրիչի համար տրվելիք առավելագույն միավորից միավորներ են հանվում՝ ըստ ստորև ներկայացված սկզբունքների:

Բովանդակության վերարտադրում

Տրվելիք միավորներից միավորներ են հանվում հետևյալ դեպքերում՝

- բովանդակային 1-2 սխալի համար՝ 1 միավոր, 3-4 սխալի համար՝ 2 միավոր, 5 և ավելի սխալների համար՝ 3 միավոր,
• բովանդակային զծի ամբողջակա-նությունը խախտող 1-2 բացթողման համար՝ 1 միավոր, 3-4 բացթողման համար՝ 2 միավոր, 5 և ավելի բացթողմաների համար՝ 3 միավոր,
• իրար հաջորդող նախադասությունների կամ պարբերությունների միջև տրամաբանական կապի 1-2 խախտման համար՝ 1 միավոր, 3-4 խախտման համար՝ 2 միավոր, 5 և ավելի խախտումների համար՝ 3 միավոր,
• խոսքի մուտքի՝ նախաբանի բացակայության համար՝ 1 միավոր,
• եզրափակիչ նախադասության (ամփոփիչ մտքի) բացակայության համար՝ 1 միավոր:

Շարադրանքի որակ

Այս բաղադրիչն իր հերթին բաղկացած է 4 բաղադրիչներից՝ 1. ուղղագրություն, 2. կետադրություն, 3. բառագործածություն, 4. քերականություն:

Սրանցից յուրաքանչյուրից թույլ տրված սխալների համար միավորներ են հանվում՝ ըստ ստորև տրված կարգի:

1. Ուղղագրություն

- 1 սխալ – 1 միավոր
• 2-3 սխալ – 2 միավոր
• 4-5 սխալ – 3 միավոր
• 6 և ավելի սխալ – 4 միավոր

2. Կետադրություն

- 1-2 սխալ – 1 միավոր
• 3-4 սխալ – 2 միավոր
• 5-7 սխալ – 3 միավոր
• 8 և ավելի սխալ – 4 միավոր

3. Բառագործածություն (բառագործածության սխալ պետք է համարել նաև կապերի և շղթայակների ոչ ճիշտ գործածությունը)

- 1-2 սխալ – 1 միավոր
• 3-4 սխալ – 2 միավոր
• 5-7 սխալ – 3 միավոր
• 8 և ավելի սխալ – 4 միավոր

4. Քերականություն (խնդրառություն, համաձայնություն, շարադասություն)

- 1-2 սխալ – 1 միավոր

- 3-4 սխալ – 2 միավոր
• 5-7 սխալ – 3 միավոր
• 8 և ավելի սխալ – 4 միավոր
Ցուցումներ

• 2-րդ բաղադրիչից հանվող միավորների թիվը որոշ դեպքերում կարող է գերազանցել 10-ը, այսինքն՝ այս բաղադրիչի համար տրվելիք առավելագույն միավորը: Այդ դեպքում 2-րդ բաղադրիչը գնահատվում է 0, սակայն 1-ին բաղադրիչին տրվելիք միավորը մնում է անխախտ. 2-րդ բաղադրիչի սխալների համար 1-ին բաղադրիչին տրվելիք միավորներից միավոր չի հանվում:

• 1-ին բաղադրիչը համարվում է գերակա: Եթե այս բաղադրիչին տրվող միավորների թիվը չի գերազանցում 3-ը, այսինքն՝ աշակերտը տրվելիք 10 միավորից վաստակում է ընդամենը 3, ապա աշխատանքը գնահատվում է «անբավարար» անգամ այն դեպքում, եթե 2-րդ բաղադրիչի համար հանվող միավորներ չկան:

• Սեփական արժեքավոր մեկնաբանության, կարծիքի հայտնման կամ վերլուծական մտքի առկայության դեպքում տրվելիք միավորները միավորներից միավոր են հանվում, եթե տրվելիք միավորների թիվը չի գերազանցում 20-ը:

• Շարադրանքում 3 ջնջում կամ ուղղում ունենալու դեպքում հանվում է 1 միավոր, 3-ից ավելի յուրաքանչյուր ուղղման կամ ջնջման համար հանվում է մեկական միավոր:

ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ գրականության հարցատոմսերը կազմվում են ըստ ստորև ներկայացրած հարցաշարի: Հարցաշարը կազմված է 7-9-րդ դասարանների գրականության ծրագրերի և դասագրքերի նյութերի հիման վրա, որոնք հարցաշարում ընդգրկված են ընտրողաբար: Ընտրության համար հիմք է ծառայել նախորդ տարիների՝ 9-րդ դասարանի հայոց լեզվի և հայ գրականության քննական թեստի ուղեցույցում տրված գրականության ցանկը: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, ընդ որում՝

- 1-ին հարցը վերաբերում է հայ հին, միջնադարյան գրականությանը կամ հայ նոր գրականության սկզբնավորման փուլին, մասնավորապես հետևյալ գրողներին՝ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի,
• 2-րդ և 3-րդ հարցերը վերաբերում են հայ նոր և նորագույն գրականությանը՝ հետևյալ բաշխումով. հարցերից մեկը պիտի լինի չափածոյից, մյուսը՝ արձակից կամ դրամատուրգիայից,
• 4-րդ հարցը վերաբերում է նորագույն շրջանի (արդի) գրականությանը՝ Հովհաննես Ծիրազ, Համո Սահյան, Հրանտ Մաթևոսյան, Վիշապ Սարոյան:

Ցուցումներ

• Հարցատոմսերը կազմելու համար անհրաժեշտ է կարևորել տարբեր դասարանների նյութերի ընդգրկվածությունը. յուրաքանչյուր հարցատոմս հնարավորինս պետք է պարունակի հարցեր բոլոր երեք (7-րդ, 8-րդ և 9-րդ) դասարանների նյութերից:

- Չափածոյի վերաբերյալ հարցերը հարցատոմսում չպիտի լինեն 2-ից ավելին:
• Ցանկալի չէ երկու արևմտահայ գրողի ներառումը մեկ հարցատոմսում:
• Ցանկալի չէ անգիր իմանալու համար նախատեսված երկու ստեղծագործության ներառումը մեկ հարցատոմսում:

Աշակերտի պատասխանը գնահատվում է առավելագույնը 20 միավորով՝ 5-ական միավոր յուրաքանչյուր հարցի համար: Յուրաքանչյուր հարցի պատասխանին տրվում է՝

- 5 միավոր՝ լիարժեք պատասխանի՝ նյութը ամբողջական, առանց սխալների և վերլուծաբար ներկայացնելու դեպքում,
• 4 միավոր՝ թերություններով կամ ոչ ԼԿԱՆ միավորներով պատասխանի դեպքում,
• 3 միավոր՝ մի քանի բացթողում կամ սխալներ թույլ տալու դեպքում,
• 2 միավոր՝ նյութը միայն մասնակիորեն ներկայացնելու դեպքում,
• 1 միավոր՝ նյութի մասին սոսկ ընդհանուր պատկերացում ունենալու դեպքում,

• 0 միավոր՝ պատասխանի բացակայության դեպքում:

Հարցաշար

(աստղանիշով նշված են անգիր սովորելու համար հանձնարարվող ստեղծագործությունները)

- 1. Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը:
2. Հայ գրերի գյուտի նախապայմանները:
3. Ոսկեդարի հայ պատմիչները, նրանց ստեղծագործությունները, դրանցում պատկերված ժամանակաշրջանները:
4. Փավստոս Բուզանդ. աշխատությունը, «Արշակ և Շապուհ» հատվածը:
5. «Հայկ և Բել» առասպելի բովանդակությունը:
6. Հայկի և Բելի կերպարների համեմատական բնութագիրը ըստ Մովսես Խորենացու:
7. «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելի բովանդակությունը:
8. Արա Գեղեցիկի և Շամիրամի կերպարներն ըստ Մովսես Խորենացու:
9. «Արտաշես և Սաթենիկ» առասպելի բովանդակությունը:
10. «Արտաշես և Արտավազդ» առասպելի բովանդակությունը:
11. «Սասունցի Դավիթ» էպոսի համառոտ բովանդակությունը:
12. «Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր կերպարները:
13. «Սասունցի Դավիթ» էպոսի և Հովհաննես Թումանյանի համանուն պոեմի համեմատական բնութագիրը:
14. Դավիթի և Մելիքի կերպարները «Սասունցի Դավիթ» էպոսում:
15. Գրիգոր Նարեկացի. ստեղծագործությունը:
16. Գրիգոր Նարեկացի. «Մեղեդի ծննդյան»:
17. Նահապետ Քուչակի ստեղծագործությունը. «Երբ սերն ի աշխարհ եկավ» հայերենը:
18. Նահապետ Քուչակի ստեղծագործությունը. «Ես այք ու դու լոյս, հոգի»՝ հայերենը:
19. Սայաթ-Նովայի կյանքը և ստեղծագործությունը. տաղը որպես բանաստեղծական կայուն ձև:
20. Սայաթ-Նովայի «Աշխարհումս ախ չիմ քաշի» տաղը:
21. Խաչատուր Աբովյանի կյանքը և ստեղծագործությունը:
22. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանը»:
23. Խաչատուր Աբովյանը՝ որպես հայ նոր գրականության հիմնադիր:
24. Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը:
25. Միքայել Նալբանդյանի «Ազատություն»՝ բանաստեղծությունը:
26. Ռաֆայել Պատկանյանի «Օրորոցի երգ»՝ բանաստեղծությունը:
27. Պետրոս Դուրյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Սիրել» բանաստեղծությունը:
28. Պետրոս Դուրյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Լճակ»՝ բանաստեղծությունը:
29. Գաբրիել Սունդուկյան. «Պեպո». բովանդակությունը, գաղափարը՝ ըստ դասագրքի հատվածի:
30. Պեպոյի և Ջիմգիմովի կերպարները Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսում՝ ըստ դասագրքի հատվածի:
31. Եղիշե Չարենցի՝ Խաչատուր Աբովյանի և Միքայել Նալբանդյանի մասին ստեղծագործությունները:
32. Րաֆֆի. «Խենթը». դասագրքի հատվածի բովանդակությունը, գաղափարը:
33. Վարդանի կերպարը Րաֆֆու «Խենթը» վեպում՝ ըստ դասագրքի հատվածի:
34. Մուրացյանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը:
35. Հարությունների կերպարները Մուրացյանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքում:
36. Լևոնի կերպարը Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքում:
37. Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը:
38. Հովհաննես Թումանյանի ստեղծագոր-

ծության ընդհանուր բնութագիրը:
39. Հովհաննես Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը:

40. Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադի բովանդակությունը, գաղափարը, գաղափար բալլադի մասին:

41. Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադը, արտասանելի վերջին հատվածը:

42. Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի բովանդակությունը, գաղափարը, նախերգանքը՝:

43. Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը, գաղափար պոեմի մասին, տեսակները:

44. Հովհաննես Թումանյանի քառյակները, գաղափար քառյակի մասին, անգիր արտասանելի 2 քառյակ աշակերտի ընտրությամբ:

45. Ավետիք Իսահակյան. «Սաադիի վերջին գարունը». բովանդակությունը, գաղափարը:

46. Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Ռավեննայում»՝ բանաստեղծությունը:

47. Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Մի մրախոն աղջիկ տեսա»՝ բանաստեղծությունը:

48. Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը:

49. Անտոնիոյի կերպարը Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքում:

50. Գրիգոր Չոիրապի «Այրին» նովելի կերպարները:

51. Գրիգոր Չոիրապի «Այրին» նովելը. գաղափար նովելի մասին:

52. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Աքսիաներու շուքին տակ»՝ բանաստեղծությունը:

53. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Սիրերգ»՝ բանաստեղծությունը:

54. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, գաղափար սոնետի մասին:

55. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Երազ օրեր» բանաստեղծությունը:

56. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Տիրություն»՝ բանաստեղծությունը:

57. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Իմ խաղաղ երեկոն է հիմա»՝ բանաստեղծությունը:

58. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Մի՞թե վերջին պոետն եմ ես»՝ բանաստեղծությունը:

59. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Մի խառնեք մեզ...» բանաստեղծությունը:

60. Եղիշե Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծությունը:

61. Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»՝ բանաստեղծությունը:

62. Դանիել Վարուժանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Ցորյանի ծովեր» բանաստեղծությունը:

63. Դանիել Վարուժան. «Ձոն»՝ բանաստեղծությունը:

64. Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը:

65. Հաճի աղայի և Սրբունի կերպարները Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքում:

66. Ակսել Բակունցի «Սպիտակ ձի» պատմվածքի կերպարները:

67. Ակսել Բակունցի «Սպիտակ ձի» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը:

68. Պարույր Սևակի ստեղծագործությունը. «Վարք մեծաց» բանաստեղծությունը:

69. Հովհաննես Ծիրազ. «Թագադրում» բանաստեղծությունը:

70. Հովհաննես Ծիրազ. «Հայ ժողովրդի երգը» և «Էքսպրոմտ» բանաստեղծությունները:

71. Համո Սահյանի ստեղծագործությունը. «Անունդ տալիս» բանաստեղծությունը:

72. Համո Սահյանի ստեղծագործությունը. «Ուր որ նայում են» բանաստեղծությունը:

73. Համո Սահյանի ստեղծագործությունը. «Իմ քարափներն ու ես»՝ բանաստեղծությունը:



ԱՎԱՐՏԱԿԱՆ

74. Հրանտ Մաթևոսյան. «Կանաչ դաշտը» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը:

75. Հրանտ Մաթևոսյան. «Կանաչ դաշտը» պատմվածքի կառուցվածքը, մայր ծիու կերպարը:

76. Վիլյամ Սարոյան. «Իմ սիրտը լեռներում է» պիեսի ընդհանուր բնութագիրը. գաղափար բատերգության մասին:

77. Վիլյամ Սարոյան. «Իմ սիրտը լեռներում է» պիեսի կերպարները:

78. Վիլյամ Սարոյան. «Իմ սիրտը լեռներում է» պիեսի բովանդակությունը, գաղափարը:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Հարցաշար

Յուրաքանչյուր դպրոցում «Հայոց պատմության» հարցատոմսերը պետք է կազմվեն՝ հինգ ընդունելով ստորև ներկայացված երկու հարցաշարերից այն մեկը, որը համապատասխանում է տվյալ դպրոցում գործածվող դասագրքին:

Առաջին հարցաշարը կազմված է ըստ «Ձանգակ» հրատարակչության հրատարակած հետևյալ դասագրքերի՝

1. Հայոց պատմություն 6, Աշոտ Մելքոնյան, Արտակ Մովսիսյան, Էդուարդ Դանիելյան, Երևան 2013 թ.,

2. Հայոց պատմություն 7, Աշոտ Մելքոնյան, Էդուարդ Դանիելյան, Գագիկ Հարությունյան, Հակոբ Մուրադյան, Երևան 2014 թ.,

3. Հայոց պատմություն 8, Աշոտ Մելքոնյան, Արամ Սիմոնյան, Արամ Նազարյան, Հակոբ Մուրադյան, Երևան 2013 թ.,

4. Հայոց պատմություն 9, Էդիկ Գևորգյան, Կարեն Խաչատրյան, Ամատունի Վիրաբյան, Երևան 2014 թ.:

Երկրորդ հարցաշարը կազմված է՝ ըստ «Մանմար» հրատարակչության հրատարակած հետևյալ դասագրքերի՝

1. Հայոց պատմություն 6, խմբագրությամբ՝ Բ. Հ. Հարությունյանի, Երևան 2013 թ.,

2. Հայոց պատմություն 7, խմբագրությամբ՝ Բ. Հ. Հարությունյանի և Պ. Հ. Հովհաննիսյանի, Երևան 2014 թ.,

3. Հայոց պատմություն 8, խմբագրությամբ՝ Վ. Բարխուդարյանի, Երևան 2013 թ.,

4. Հայոց պատմություն 9, խմբագրությամբ՝ Վ. Բարխուդարյանի, Երևան 2014 թ.:

Հարցատոմսի կառուցվածքը

Հարցատոմսը պետք է կազմված լինի չորս հարցից՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանից մեկ հարց.

- 1-ին հարց – հին և հնագույն շրջան
• 2-րդ հարց – միջին դարեր,
• 3-րդ հարց – նոր շրջան,
• 4-րդ հարց – նորագույն շրջան:

Հարցատոմսերը կազմվում են դպրոցում՝ մեթոդավորման կողմից:

Գնահատման չափանիշները

Աշակերտի պատասխանը գնահատվում է առավելագույնը 20 միավորով՝ 5-ական միավոր յուրաքանչյուր հարցի համար:

Յուրաքանչյուր հարցի պատասխան գնահատվում է՝

- 5 միավոր - լիարժեք պատասխանի՝ նյութը ամբողջական, առանց սխալների և վերլուծաբար ներկայացնելու դեպքում,
• 4 միավոր - թերթյուններով կամ ոչ եական սխալներով պատասխանի դեպքում,
• 3 միավոր - մի քանի բացթողում կամ սխալներ թույլ տալու դեպքում,
• 2 միավոր - նյութը միայն մասնակիորեն ներկայացնելու դեպքում,
• 1 միավոր - նյութի մասին սոսկ ընդհանուր պատկերացում ունենալու դեպքում,
• 0 միավոր - պատասխանի բացակայության դեպքում:

Առաջին հարցաշար

(Ըստ «Ձանգակ» հրատարակչության դասագրքերի)

ՀԻՆ և ՀՆԱԳՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱՆ

1. Հայկական լեռնաշխարհը՝ հայերի հայրենիք:

«Հայրենիք» հասկացությունը: Հայկական լեռնաշխարհի դիրքն ու սահմանները: Լեռները:

2. Հայկական լեռնաշխարհի լճերը, գետերը և բնակլիմայական պայմանները: Լճերը: Գետերը:

3. Հայաստանի պատմավարչական բաժանումները:

Հայաստանի վաղ շրջանի պատմավարչական բաժանումները:

4. Հայերի ծագումը:

Հայաստանը հնդեվրոպական նախահայրենիք: Հայաստանը Հին Արևելքի վեպերում և առասպելներում:

5. Վաղ պետական կազմավորումները Հայաստանի տարածքում:

Հայկական առաջին պետական կազմավորումը, Արատա: Հայասա թագավորությունը: Նաիրի երկիրը: Հայկազունիների Արարատյան թագավորությունը:

6. Վանի թագավորության հիմնադրումը: Տուշպա-Վանը՝ մայրաքաղաք:

Վանի թագավորության հիմնադրումը: Տուշպա-Վանը՝ մայրաքաղաք:

7. Թագավորության հզորացումը: Վանի աշխարհակալ տերությունը:

Երկրի հզորացումը Մենուա արքայի օրոք: Արգիշտի I հզոր արքան:

8. Հայկազունիների ճոր թագավորությունը Ք.ա. VII-VI դարերում:

Պարույր նահապետը՝ Հայոց թագավոր: Երվանդ I Սակավակյաց: Տիգրան I Երվանդյան:

9. Հայկազունի երվանդակյանների թագավորության վերականգնումը:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանը:

10. Հայոց թագավորությունները Ք.ա. III դարում:

Հայաստանը Ք.ա. IV դարի վերջին: Հայկական թագավորությունները և Սելևկյան տերությունը:

Ք.ա. III դարում:

11. Արտաշեսյան թագավորության կազմավորումը:

Հայկական թագավորությունների անկախացումը: Արտաշես I-ը և հայկական հողերի միավորումը:

12. Արտաշես I-ի բարեճակրությունները:

Վարչական և ռազմական բարեփոխումները: Արտաշես I-ի մյուս բարեփոխումները: Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը:

13. Տիգրան II-ի գահակալումը: Մեծ Հայքի ամբողջականության վերականգնումը:

Տիգրան II-ի գահակալումը: Ծովքի վերամիավորումը:

14. Տիգրան II Մեծի տերության ստեղծումը: Հայկական աշխարհակալության ընդլայնումը:

Հայ-պոնտական դաշինքը և Կապադովկայի նվաճումը: Հայ-պարթևական պատերազմը:

Սելևկյան պետության միացումը:

15. Տիգրան Մեծի տերությունը:

Տիգրան Մեծի հիմնած բնակավայրերը: Տիգրան Մեծը ժամանակակիցների գնահատմամբ:

16. Մեծ Հայքի թագավորությունը Արտավազդ II-ի օրոք Կրասոսի արշավանքը: Հռոմեական նոր արշավանքը:

17. Տրդատ I-ի գահակալումը:

Հայ-պարթևական դաշինքն ընդդեմ Հռոմեական կայսրություն:

18. Մեծ Հայքը I դարի վերջից մինչև III դարի սկիզբը:

Սանատրուկ II: Վաղարշ I: Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը:

19. Տրդատ III-ի գահակալությունը:

Տրդատ արքայազնի և Գրիգոր Պարթևի վերադարձը:

20. Հայկական մշակույթի ակունքները: Հայկական առասպելները:

